Azg
armenian daily

27 ՆՈՅԵՄԲԵՐ 2003 ՀԻՆԳՇԱԲԹԻ 218(2903)

ԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ ՀԱՍԱՐ

Այսօր աղասվում է նոր մագնիսական փոթորիկ

Ամերիկյան NASA օդաչիզերական գործակալության եւ Օվկիանոսների ու մթնոլորտի ուսումնասիրման ազգային վարչության մասնագետների դիտարկումները վկայում են, որ այսօր երկրի վրա կարող է սկսվել նոր մագնիսական փոթորիկ, քանզի Արեգակի վրա, հենց երկրի դիմաց Յուղիտերի չափ խոշոր բիծ է առաջացել: «Նյու Յորք թայմսն» ընդգծում է, որ նոյեմբերի 4-ին Արեգակի վրա տեղի ունեցած բռնկումն ամենահզորն է եղել դիտարկումների ամբողջ ժամանակամիջոցում: Այդ օրն Արեգակից արտանետվել էր մի քանի միլիարդ տոննա իոնացված գազ: Թեեւ այդ հոսքը հիմնականում շրջանցել էր երկիրը, բայց արտանետված արեգակնային զանգվածի մի մասը հասել էր մեր մոլորակ եւ ուժեղ մագնիսական փոթորիկ առաջացրել:

Հոկտեմբերին Արեգակի վրա տեղի ունեցած մի շարք բռնկումներն առաջ էին բերել երկրի մագնիսական դաշտի կտրուկ փոփոխություններ: Մագնիսական մի փոթորկի հետեւանքով հոկտեմբերի 30-ին խափանվել էր կամը ծառոնական «Միդորի-2» արբանյակի հետ: Գիտնականները նախազգուշացնում են, որ մագնիսական փոթորիկը կարող է վատացնել խրոնիկական հիվանդություններ ունեցող անձանց ինքնազգացողությունը: Բացի դրանից, հնարավոր են էլեկտրահաղորդման գծերի եւ արբանյակային կամի համակարգերի աշխատանքի խափանումներ:

«Վարդյա հեղափոխությունից» հետո ինչպիսի՞ն կլինեն հայ-վրացական հարաբերությունները

ԹԱԹՈՒԼ ՀԱԿՈԲՅԱՆ

Հունվարի 4-ին Վրաստանում տեղի կունենան արտահերթ նախագահական ընտրություններ: Հարեւան հանրապետությունում նոր ղեկավար կընտրվի կամ այդ երկրում նոյեմբերի 22-23-ին պետական հեղաշրջում իրականացրած Միխայիլ Սաակաշվիլին, կամ նախագահի պաշտոնակատար Նինո Բուրջանաձեն, որը պետական հեղաշրջում իրականացնելու գործում առանցքային դեր չէր խաղում: (Երեկ «Միացյալ ազգային շարժումը» եւ «Բուրջանաձե-ժողովրդավարները» նախագահական ընտրություններում առաջադրեցին Սաակաշվիլու թեկնածությունը):

Իշխանափոխիչ եռյակը. Նինո Բուրջանաձե. Միխայիլ Սաակաշվիլի. Զուրաբ Ժվանիա

Մարտավարական առումով եւ վրաց-ռուսական հարաբերությունների տեսակետից Սաակաշվիլու, Բուրջանաձեի եւ Զուրաբ Ժվանիայի միջեւ տարբերությունն էական չէ. վերջինս ընդգծված արեւմտամետ (ամերիկամետ) է, Բուրջանաձեն՝ չափավոր արեւմտամետ, Սաակաշվիլին՝ ծայրահեղ արեւմտամետ:

Մ. Նահանգները Վրաստանում իրականացված պետական հեղաշրջմանը տալիս է «վարդյա» կամ «թավշյա» հեղափոխություն անունը՝ ըստ էության ողջունելով եւ արդարացնելով Վրաստանի օրինական նախագահ էդուարդ Շեւարդնաձեի բռնի տաղալումը: Այստեղ էական չէ Շեւարդնաձեի անձը, փաստն այն է, որ տաղալվել է (ճիշտ է, վրաց ժողովուրդը մեծ մասամբ ողջունում է) երկրի նախագահը:

Տես էջ 3

ՀԱՆԴԻՊՈՒՄՆԵՐ

Վ. Պուտին. «Ռուսաստանը ամեն ինչ կանի, որ Կովկասի ժողովուրդները հաշտ ու խաղաղ ապրեն»

ITAR-TASS-PHOTOLURE

ՆՈՎՈ ՕԳԱՐԵՎՈ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Ռուսաստանի նախագահ Վլադիմիր Պուտինը հույս է հայտնել, որ Վրաստանի նախագահական ընտրությունները կանցկացվեն օրենքով նախատեսված ժամկետում, եւ Վրաստանում «մենք կունենանք մեր գործընկերը՝ օրինականորեն ընտրված նախագահը»: Այդ մասին նա ասել է Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի երկրորդի, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդի, Կովկասի մահմեդականների վարչության նախագահ շեյխ Ալլահշուքյուր Փաշազադեի եւ Համայն Վրաստանի պատրիարք-կաթողիկոս Իլիա երկրորդի հետ կայացած հանդիպմանը: «Ռուսաստանը բոլոր ջանքերը գործադրել է ու այսուհետեւ էլ կգործադրի, ամեն ինչ կանի, որպեսզի Կովկասի ժողովուրդները հաշտ ու խաղաղ ապրեն եւ տնտեսապես բարգավաճեն», ընդգծել է Պուտինը:

ՏԱՍՏԱՌՈՏ

Պահեստազորի բժիշկ սպաների զորակոչ եւ զորացրում

Նախագահ Ռոբերտ Քոչարյանը նոյեմբերի 25-ին հրամանագիր է ստորագրել Հայաստանի Հանրապետության զինված ուժերի պահեստազորի առաջին խմբի բժշկական կազմի սպաների զորակոչ անցկացնելու եւ զորացրում կատարելու մասին: Համաձայն հրամանագրի, 2003 թ. դեկտեմբեր ամսին կանցկացվի ՀՀ զինված ուժերի պահեստազորի առաջին խմբի բժշկական կազմի մինչեւ 35 տարեկան սպաների զորակոչ՝ ծառայության ժամկետը սահմանելով երկու տարի: 2003 թ. դեկտեմբեր ամսին կզորացրվեն սահմանված ժամկետում ժամկետային զինվորական ծառայությունն անցած ՀՀ զինված ուժերի պահեստազորի առաջին խմբի բժշկական կազմի սպաները:

«Հոկտեմբերի 27»-ի դատավճիռը կհրապարակվի դեկտեմբերի 2-ին

ԵՐԵՎԱՆ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Մայրաքաղաքի Կենտրոն եւ Նորք-Մարաշ համայնքների առաջին ատյանի դատարանի դատավոր Սամվել Ուզունյանը, դեկտեմբերի 2-ին կհրապարակի «հոկտեմբերի 27»-ի քրեական գործով դատավճիռը: Այս մասին հայտնեցին դատարանում: Դատարանը խորհրդակցական սենյակ էր հեռացել նոյեմբերի 14-ին:

Վանաձորում խոզուկից դպրոցական է մահացել

«Ազգ»-ը հաղորդել էր, որ խոզուկի համաճարակի պատճառով փակվել էին Վանաձորի հանրակրթական, երաժշտական դպրոցները, ինչպես նաեւ մանկապարտեզները: Կարծելով, թե համաճարակն անցնում է, երկուշաբթի օրվանից (նոյեմբերի 24-ից) քաղաքի դպրոցներում դասերը վերսկսվել էին: Սակայն 3 օր անց դասերը դարձյալ ընդհատվեցին, որովհետեւ թիվ 10 դպրոցի աշակերտներից մեկը խոզուկից մահացել է: Այս ամենը ցույց է տալիս, որ առողջապահության նախարարությունը իրադրությունը իրականում չի վերահսկում:

Ահաբեկչությունը չի կարող կրոնական արդարացում ունենալ

ՄՈՍԿՎԱ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Հայաստանի, Ադրբեջանի, Վրաստանի եւ Ռուսաստանի հոգեւոր առաջնորդներն այսօր իրենց պետությունների ղեկավարներին կոչ են արել «ամեն ինչ անել կասեցնելու ծայրահեղական խմբերի, հատկապես կովկասյան տարածաշրջանից ղեկավարվողների գործունեությունը»: Այդ մասին ասվում է Սբ. Դանիլի վանքում կայացած քառակողմ հանդիպման արդյունքների հիման վրա ընդունված ուղերձում:

«Մենք դարձյալ հիշեցնում ենք, որ ահաբեկչությունը չի կարող կրոնական արդարացում ունենալ», ասվում է փաստաթղթում, որն ստորագրել են Մոսկվայի եւ Համայն Ռուսիո պատրիարք Ալեքսի երկրորդը, Ամենայն հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդը, Կովկասի մահմեդականների ղեկավար շեյխ ուլ իսլամ Ալլահշուքյուր Փաշազադեն եւ Համայն Վրաց պատրիարք-կաթողիկոս Իլիա երկրորդը: Նրանց կարծիքով, «անհրաժեշտ է վերահսկողություն հաստատել տարածաշրջանում եղած զենքի նկատմամբ եւ կասեցնել ահաբեկչությունը սնուցող ֆինանսական հոսքերը»:

Միաժամանակ նրանք դատապարտեցին ահաբեկիչների եւ ծայրահեղականների գործողությունները, որոնք փորձում են ազգային եւ կրոնական տարբերություններն օգտագործել իրենց նպատակների համար՝ այլ ազգության կամ կրոնի ներկայացուցիչներից «բշնամու» կերպար ստեղծելով:

«Հայաստան» համահայկական հիմնադրամ
Թելեթոն Լոս Անջելեսում
12 ժամ ուղիղ եթերում

Դիտեք նոյեմբերի 27-ին, Երեւանի ժամանակով երեկոյան ժամը 8-ից մինչեւ նոյեմբերի 28-ի առավոտյան 8-ը:

Թելեթոնին կարող եք հետեւել նաեւ ինտերնետի միջոցով՝ www.himnadram.org:

Ձեր նվիրատվությունները փոխանցեք՝

Հայաստանի Կենտրոնական բանկ
հ/հ 103003215672 (ՀՀ դրամ)
«Հայաստան» համահայկական հիմնադրամ
HSBC Bank Armenia cjsc,
հ/հ 001-002195-001 (ՀՀ դրամ)
հ/հ 001-002195-102 (USD)
«Հայաստան» համահայկական հիմնադրամ
կամ զանգահարեք՝ **52.15.05, 56.01.06, 52.09.40, 58.07.82**

Թելեթոնի ընթացքում հավաքված գումարն ամբողջությամբ հատկացվելու է ԼՂՀ շրջաններն իրար կապող «Յուսիս-հարավ» ավտոմայրուղու շինարարության ծրագրին:

ԵՐԵՎԱՆ

Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնովը այցելեց Հայոց ցեղասպանության հուշահամալիր

ԵՐԵՎԱՆ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ: Երկօրյա պաշտոնական այցով Երեւան ժամանած Տաջիկստանի Հանրապետության նախագահ Էմոմալի Ռահմոնովն այսօր այցելեց Ծիծեռնակաբերդ, ծաղկեպսակ դրեց Մեծ եղեռնի զոհերի հուշակոթողին: Նախագահը հուշահամալիրի ծառուղում եղեւնի տնկեց՝ նշելով, որ այդ ծառը կհիշվի:

Է. Ռահմոնովը շրջեց նաեւ Հայոց ցեղասպանության ինստիտուտ-թանգարանում, ծանոթացավ 1915 թ. ոճիրը բացահայտող փաստավավերագրական նյութերին՝ հուշամատյանում կատարելով հետեւյալ գրառումը. «Ժողովուրդը, որն իր մեջ ուժ է գտել վերածնվելու այդօրինակ աղետից հետո, արժանի է հիացմունքի եւ ունի մեծ ապագա»:

PHOTOLURE

ՀԱՅԱՍՏԱՆ-ՏԱՋԻԿՍՏԱՆ

Նախագահները նշում են երկկողմ հարաբերությունների բարձր մակարդակը

ԵՐԵՎԱՆ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ, ՆՈՅՅԱՆ ՏՊԱՆ. Տաջիկստանի նախագահ Էմոմալի Ռահմոնովի Հայաստան այցի արդյունքների ամփոփմանը, Հայաստանի եւ Տաջիկստանի միջեւ ներկայիս երկկողմ հարաբերությունների գնահատմանը, ինչպես նաեւ դրանց զարգացման հեռանկարներին էր նվիրված Հայաստանի եւ Տաջիկստանի նախագահների համատեղ մամուլի ասուլիսը:

Ընդգծելով Հայաստանի եւ Տաջիկստանի բաղմակողմ հարաբերությունների բարձր մակարդակը, նախագահներ Ռոբերտ Քոչարյանը եւ Էմոմալի Ռահմոնովը, այնուհանդերձ, դժգոհություն արտահայտեցին երկկողմ առեւտրատնտեսական հարաբերությունների առկա մակարդակի առնչությամբ եւ նշեցին, որ չի համապատասխանում գոյություն ունեցող ներուժին:

Մամուլի ասուլիսում երկու նախագահները հայտարարեցին, որ հայ-տաջիկական միջկառավարական հանձնաժողովին առաջադրված է հսկայ խնդիր զբաղվել տնտեսական հարցերի լայն սպեկտրով: Կողմերը պայմանավորվել են, որ միջկառավարական հանձնաժողովի առաջիկա նիստը կկայանա Երեւանում 2004 թ. փետրվարին: Պայմանավորվածություն է ձեռք բերված նաեւ զուգահեռ գործարար համաժողով անցկացնելու մասին:

Նախագահների հանդիպմանը ներկայացել են նաեւ միջազգային կազմակերպություններում եւ առաջին հերթին Հավաքական անվտանգության պայմանագրի շրջանակում, ինչպես նաեւ ՄԱԿ-ի եւ ԵԱՀԿ-ի շրջանակում երկու պետությունների հետագա համագործակցությանն առնչվող մի շարք հարցեր:

Ասուլիսում առանձնահատուկ տեղ գրավեցին տարածաշրջանային անվտանգության հարցերը: Այսպես, ըստ Տաջիկստանի նախագահի, ինչպես Հարավային Կովկասում, այնպես էլ Կենտրոնական Ասիայում դեռեւս պահպանվում են լարվածության օջախներ, ինչը չի կարող չանհանգստացնել:

Երկու նախագահները հայտնեցին, որ հանդիպմանը քննարկվել են նաեւ Վրաստանի վերջին իրադարձությունները:

Նախագահ Քոչարյանը, հայտնելով իր եւ տաջիկ գործընկերոջ տեսակետները, ցանկություն հայտնեց, որ հետագա գործընթացները Վրաստանում ընթանան սահմանադրական հունով. «Ցանկալի է, որ առաջիկա ընտրությունները լարվածություն չավելացնեն վրաց հասարակության մեջ: Շատ կցանկանայինք, որ այդ լուծումը խաղաղ լիներ, եւ ընտրությունները՝ օրինական»: Նա նշեց, որ Հայաստանի համար Վրաստանի իրադրությունը անմիջական նշանակություն ունի, քանի որ Հայաստանի տրանսպորտային հաղորդակցություններն անցնում են Վրաստանի տարածքով: «Մեզ համար շատ կարեւոր է, որ Վրաստանը լինի կայուն եւ դինամիկ զարգացող պետություն: Այն ամենը, ինչ խանգարում է կայունությանը եւ ինչ-ինչ խնդիրներ ստեղծում Վրաստանում, խնդիրներ է ստեղծում մեզ համար եւս: Մենք անկեղծորեն շահագրգռված ենք, որ իրադրությունը Վրաստանում առավելագույնս կառավարելի եւ կայուն լինի», հայտարարեց Հայաստանի նախագահը:

ԿԲ նախագահն ընդունեց Բահրեյնի Թագավորության դեսպանին

Երեկ ՀՀ ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Բահրեյնի Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Քամալ Սալահ Ասալեհին (նստավայրը՝ Թեհրան): Դեսպանը ԿԲ էր այցելել ծանոթանալու եւ համագործակցության հնարավոր հեռանկարները քննարկելու համար:

ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը դեսպանի հետ զրույցում նշեց, որ Հայաստանն ու Բահրեյնն ընդհանուր շատ բաներ ունեն, այդ թվում պատմական շփումներ Իրանի հետ: Ներկայացնելով Բահրեյնի Թագավորության բանկային համակարգը, դեսպանն ասաց, որ Բահրեյնն ունի զարգացած բանկային օրենսդրություն, իր բարենպաստ աշխարհագրական դիրքով հանդիսանում է ֆինանսաբանկային կենտրոն օֆշորային բանկերի համար եւ իր ներկա զարգացման աստիճանին հասել է ֆինանսական համակարգի զարգացման շնորհիվ: Դեսպանը հատուկ նշեց, որ երկրում առկա է արժեթղթերի զարգացած բորսա, կենտրոնական բանկում կազմակերպվում են բանկային մասնագետների վերապատրաստման ուսումնական ծրագրեր տարածաշրջանային երկրների համար:

ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը նշեց, որ Բահրեյնի Թագավորության եւ Հայաստանի Հանրապետության համագործակցության բավականին հետաքրքիր հեռանկարներ կան ֆինանսաբանկային ոլորտում: Նա ասաց, որ ԿԲ-ն մասնավորապես հետաքրքրված է Բահրեյնի բանկային օրենսդրության հետ ծանոթանալու եւ բանկային ուսումնական ծրագրերին մասնակցելու հնարավորությամբ:

ՀՀ ԿԲ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՍՏԵՓԱՆԱԿԵՐՏ

ԼՂՀ Ազգային ժողովում ընդունվեց օրակարգային հարցերի մեծ մասը

ԼՂՀ Ազգային ժողովի հերթական նիստի օրակարգը ընդգրկում էր շուրջ 20 հարց: Պատգամավորները նախ լրացումներ կատարեցին 3-րդ գումարման Ազգ 7-րդ նստաշրջանի օրենսդրական գործունեության ծրագրում: Այնուհետեւ քննարկումներ ծավալվեցին օրակարգային մյուս հարցերի շուրջ: Մասնավորապես լսվեցին «ԼՂՀ 2003 թ. 9 ամսվա պետական բյուջետային համակարգի» եւ «ԼՂՀ բյուջետային համակարգի մասին» տեղեկատվությունները: Առաջին հարցը ամբողջությամբ ընդունվեց երկրորդ ընթերցմամբ, իսկ ահա բյուջետային համակարգի մասին հարցը դարձավ բուռն քննարկումների առարկա: Եղան առաջարկություններ լրացումներ եւ փոփոխություններ կատարելու վերաբերյալ: Անհրաժեշտություն առաջացավ քննարկվող հարցը լրացուցիչ քննության առնել համապատասխան հանձնաժողովում, իսկ որոշ պատգամավորներ նույնիսկ գտան, որ կարելի է քննարկել Վերահսկիչ պալատում: Նախագիծն ընդունվեց առաջին ընթերցմամբ:

Տարածայնություններ հարուցեցին «Ազգային անվտանգության մարմինների մասին», «Ազգային անվտանգության մարմիններում ծառայության մասին», «Ոստիկանությունում ծառայության մասին» օրինագծերը: Պատգամավորները նպատակահարմար գտնելով ՀՀ համապատասխան օրենքները տեղայնացնել՝ գտան, որ պետք է ազգային անվտանգության եւ ոստիկանության ծառայողների վրա տարածել հետեւյալ դասային կոչումները՝ ոչ թե գեներալ-գնդապետ, ինչպես ՀՀ-ում է, այլ գեներալ-լեյտենանտ: ԼՂՀ նշված համակարգերում, այսպիսով, դասային ամենաբարձր կոչումը կլինի գեներալ-լեյտենանտը:

Համարյա առանց տարաձայնությունների խորհրդարանը հավանություն տվեց «Քաղաքացիական ծառայության մասին», «ԼՂՀ ջրային օրենսգրքի», «Սոցիալական ապահովության քարտերի մասին», «Պետական կենսաթոշակների մասին», «Փախստականների մասին», «Գիտական եւ գիտատեխնիկական գործունեության մասին», «Գույքահարկի մասին», «ԼՂՀ 2003 թ. պետբյուջեից ստացվող ֆինանսական միջոցների օգտագործման մասին» ԼՂՀ օրենքների նախագծերին:

Որոշվեց հանրապետության տարածքում հազվագյուտ, արժեքավոր արդյունաբերական նշանակություն ունեցող առանձին ծառատեսակների հատումների օրինականությունը ստուգող հանձնաժողովի գործունեության արդյունքները քննարկել կառավարությունում:

Վերջում կառավարության անդամները պատասխանեցին պատգամավորների հարցերին:

Կ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ
Ստեփանակերտ

ԳՅՈՒՄՐԻ

Կանայք եւ զբաղվածությունը

Ըստ մի սոցհարցման արդյունքների

Գյումրիում կանանց զբաղվածության եւ հարակից խնդիրների վերաբերյալ սոցիոլոգիական ուսումնասիրություն է իրականացրել այստեղ գործող «Անա» սոցիալ-հոգեբանական կենտրոն հասարակական կազմակերպությունը: Հոլանդական CORDAID կազմակերպության աջակցությամբ շարունակվող «Կանանց հզորացում» ծրագրի շրջանակներում հարցման են ենթարկվել գլխավորապես աշխատունակ տարիքի 300 կանայք, որոնց 37,8 տոկոսն ունեցել է բարձրագույն, 34,8 տոկոսը՝ միջնակարգ մասնագիտական կրթություն: Նրանց ընդհանուր թվի 56,7 տոկոսը, ըստ տրված պատասխանների, չի աշխատում: Չաշխատողների 35 տոկոսի համար դրա պատճառը համապատասխան աշխատատեղերի բացակայությունն է: Չաշխատելու պատճառների թվում նշվել են նաեւ երեխաների դաստիարակությամբ զբաղվելը (24,7 տոկոս), մասնագիտություն չունենալը (18,5 տոկոս), կնոջ աշխատելուն ամուսնու դեմ լինելը (2,8 տոկոս) եւ այլն: Իսկ աշխատող կանանց 57,5 տոկոսն է նշել, որ գտել է աշխատանք ըստ մասնագիտության: Հարցմանը մասնակցած կանանց զգալի մեծամասնությունը՝ 73 տոկոս, կցանկանար հիմնել սեփական գործ, սակայն դրան խոչընդոտում է հիմնականում ֆինանսական միջոցների բացակայությունը:

Հարցվածների կեսից փոքր ավելին նշել են, որ իրենք ընտանեկան բյուջեում որեւէ ներդրում չունեն: 20,3 տոկոսը իրենց ներդրումը գնահատել են 50 տոկոսից պակաս, 9,5-ը՝ 50 տոկոսից ավելի: 300 կանանցից 13-14-ի աշխատավարձը կազմում է նրանց ամբողջ ընտանեկան բյուջեն:

Սոցհարցման ենթարկված կանանց 43,7 տոկոսն ունի տարբեր բնույթի առողջական խնդիրներ:

Ասվածին հավելենք, որ կանայք Գյումրիում միշտ գերակշռող մեծամասնություն են կազմում պաշտոնապես գրանցված գործազուրկների թվում: Ընթացիկ ամսվա սկզբի տվյալներով էլ զբաղվածության տարածքային կենտրոնում հաշվառման կանգնած 28.243 աշխատանք փնտրող քաղաքացիներից 20.500-ից ավելին կանայք են:

Գ. Ս.

ԿԲ նախագահն ընդունեց Բահրեյնի Թագավորության դեսպանին

Երեկ ՀՀ ԿԲ նախագահ Տիգրան Սարգսյանն ընդունեց Հայաստանի Հանրապետությունում Բահրեյնի Թագավորության արտակարգ եւ լիազոր դեսպան Քամալ Սալահ Ասալեհին (նստավայրը՝ Թեհրան): Դեսպանը ԿԲ էր այցելել ծանոթանալու եւ համագործակցության հնարավոր հեռանկարները քննարկելու համար:

ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը դեսպանի հետ զրույցում նշեց, որ Հայաստանն ու Բահրեյնն ընդհանուր շատ բաներ ունեն, այդ թվում պատմական շփումներ Իրանի հետ: Ներկայացնելով Բահրեյնի Թագավորության բանկային համակարգը, դեսպանն ասաց, որ Բահրեյնն ունի զարգացած բանկային օրենսդրություն, իր բարենպաստ աշխարհագրական դիրքով հանդիսանում է ֆինանսաբանկային կենտրոն օֆշորային բանկերի համար եւ իր ներկա զարգացման աստիճանին հասել է ֆինանսական համակարգի զարգացման շնորհիվ: Դեսպանը հատուկ նշեց, որ երկրում առկա է արժեթղթերի զարգացած բորսա, կենտրոնական բանկում կազմակերպվում են բանկային մասնագետների վերապատրաստման ուսումնական ծրագրեր տարածաշրջանային երկրների համար:

ԿԲ նախագահ Տ. Սարգսյանը նշեց, որ Բահրեյնի Թագավորության եւ Հայաստանի Հանրապետության համագործակցության բավականին հետաքրքիր հեռանկարներ կան ֆինանսաբանկային ոլորտում: Նա ասաց, որ ԿԲ-ն մասնավորապես հետաքրքրված է Բահրեյնի բանկային օրենսդրության հետ ծանոթանալու եւ բանկային ուսումնական ծրագրերին մասնակցելու հնարավորությամբ:

ՀՀ ԿԲ ՄԱՄՈՒԼԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

«Ազգային միաբանության» նոր նախագահությունը հստակեցրել է առաջիկայում իրականացվելիք քաղաքականությունը

ԵՐԵՎԱՆ, 26 ՆՈՅԵՄԲԵՐ, ԱՐՄԵՆՊՐԵՍ. «Ազգային միաբանություն» կուսակցության նոր նախագահության այսօր կայացած անդրանիկ նիստում քննարկվել են Հայաստանի սոցիալ-տնտեսական եւ ներքաղաքական իրավիճակին առնչվող հարցեր, ինչպես նաեւ հստակեցվել է առաջիկայում կուսակցության կողմից իրականացվելիք քաղաքականությունը: Լրագրողների հետ այսօր ունեցած հանդիպման ժամանակ «ԱՄ» կուսակցության առաջնորդ Արտաշես Գեղամյանը, անդրադառնալով «Արդարություն» դաշինքի եւ «Ազգային միաբանության» փոխգործակցությանը վերաբերող հարցին, նշեց, որ ժամանակին «իշխանափոխության իրենց ճանապարհը հերքվեց որոշ քաղաքական ուժերի կողմից, իսկ օրեր առաջ Արամ Զ. Սարգսյանը հարցազրույցում խոստովանել է, որ փետրվարի 19-ին իրենք կորցրել են պատմական պահը»: «ԱՄ» նախագահին ոգեւորել է այն հանգամանքը, որ ընդդիմության մյուս թեւը վերանայում է իր կատարածը: Սակայն, նա եւս խոստովանեց, որ իրենք էլ ամենեւին անսխալական չեն:

Վրաստանի իրադարձությունների առումով Ա. Գեղամյանը վաղաժամ համարեց վրացի ընդդիմադիրներին իշխանության գալու համար ողջունելը: «Մենք պետք է դիտորդի դերում լինենք, միաժամանակ պատրաստ՝ համագործակցելու այն ուժերի հետ, որոնց կընտրի վրաց ժողովուրդը», նշեց «ԱՄ» ղեկավարը: Վրաստանում ծավալվող դեպքերի հարցում նրբանկատություն ցուցաբերելը նա պայմանավորում է նաեւ այդ երկրում մեծ թվով հայերի առկայությամբ: Ա. Գեղամյանն այս ենթատեքստում չշրջանցեց նաեւ Ջավախքի խնդիրը, ընդգծելով, թե անհրաժեշտ է ամեն ինչ անել, որ վիրահայությունը պաշտպանված լինի:

«ԱԶԳ» ՕՐԱԹԵՐԹ
Հրատարակության ժԲ տարի
Հիմնադիր եւ հրատարակիչ
«ԱԶԳ ՕՐԱԹԵՐԹ» ՍՊԸ
Երեւան 375010, Հանրապետության 47
Ֆաքս՝ 374-1-562863
e-mail: azg2@arminco.com
www.azg.am
Գլխաւոր խմբագիր
ՅԱԿՈԲ ԱՒԵՏԻՔԵԱՆ / հեռ. 521635
Խմբագիր
ՊԱՐՈՅՐ ՅԱԿՈԲԵԱՆ / հեռ. 529221
Լրագրողների սենեակ
/ հեռ. 581841
Համակարգ. ծառայութիւն
/ հեռ. 582483
Apple Macintosh
համակարգչային շարուածքը
«Ազգ» թերթի
Թերթի նիւթերի ամբողջական թէ մասնակի արտատպումները տրպագիր մամուլի միջոցով կամ ռադիոհեռուստատեսութեամբ, առանց խմբագրութեան գրաւոր համաձայնութեան, խստիւ արգելւում են. համաձայն ՀՀ հեղինակային իրաւունքի մասին օրէնքի:
Նիւթերը չեն գրախօսւում ու չեն վերադարձւում
«AZG» DAILY NEWSPAPER
Editor-in-chief
H. AVEDIKIAN / phone: 521635
47 Hanrapetoutian st.
Yerevan, Armenia, 375010

ԱԶԳ

Հայաստանում ԱՄՆ դեսպանատան նոր շենքն ամենամեծերից է

Դեսպան Ջոն Օդդուեյը երեկ լրագրողներին հրավիրել էր ԱՄՆ դեսպանատան նոր, կիսակառույց շենքը

Առաջինը, որ աչքի է զարնում, կիսակառույցի խոշոր ծավալներն են: Միայն կենտրոնական մասնաշենքը զբաղեցնում է 11 հազար 800 քառակուսի մետր տարածք: ԱՄՆ սանդղակներով նմանօրինակ կառույցները 10-12 հա-ից ավելի տարածք չզբաղեցնեն, այս մեկը 22 հա է: Իր ամրությամբ ու հզորությամբ կառույցը ռմբաթափանց է հիշեցնում: Արդյոք դա նշանակո՞ւմ է, որ ԱՄՆ կառավարությունը համարձակորեն կարեւորում է նաեւ Հայաստանի հետ հարաբերությունները: ԱՄՆ դեսպան Ջոն Օդդուեյը պատասխանեց, որ քաղաքային իշխանություններից 5 մլն դոլարով գնված հողատարածքում զառիթափները շատ են, որոնց վրա մշտական շինություններ հնարավոր չէ կառուցել: Նաեւ դրանց հաշվին է տարածքը մեծ վերցվել: Հարավային Կովկասի տարածաշրջանն ընդհանրապես կարեւորվել է նաեւ մեծ քաղաքականության համատեքստում, եւ իրենք հարաբերությունները զարգացնելու նոր միջոցներ են գործի դնում: Ոչ միայն Երեւանում, այլեւ Թբիլիսիում ու Բաքվում էլ նախատեսվում է դեսպանատան նոր շենքեր կառուցել նույն չափանիշներով ու տեխնոլոգիաներով: Եվ բացի այդ, ԱՄՆ-ը Հայաստանում օգնության մեծ ծրագրեր է իրականացնում, ամերիկյան կազմակերպությունները շատ-շատ են, եւ բոլորը, բացի USID-ից, կտեղափոխվեն այստեղ:

Շինարարությունն իրականացնում է «Ջեյ էյ Ջոնս» կապալառու կազմակերպությունը, ղեկավարը Ֆիլիպ Լուն է՝ ԱՄՆ պետքարտուղարության շինարարական ծրագրերի ներկայացուցիչը: Ֆիլիպ Լուն պատմում է, որ ճարտարապետական նախագծի հեղինակներն ամերիկացիներ են, ովքեր մինչ ծրագրերի մեկնարկելը եղել են Հայաստանում, ուսումնասիրել տեղական ճարտարապետությունը, որպեսզի իրենց ստեղծածը չհակադրվի քաղաքի ընդհանուր կերպարին: Հողային աշխատանքներն սկսվել են 2002 թ. սեպտեմբերից, մինչեւ 2003 թ.-ի դեկտեմբեր նախատեսվում է ավարտին հասցնել շինարարությունը եւ նոր շենք տեղափոխվել 2004 թ. գարնանը:

Չափազանց տպավորիչ են 5 հարկանի կառույցի ամրության ցուցանիշները: Այն նախագծվել է սեյսմակայունության ամենաբարձր նորմատիվների համապատասխան: Ամրանային ցանցերը բացառիկ խտություն ունեն, այնպես որ շենքը կարող է դիմանալ նույնիսկ ռումբերի պայթյուններին: Ցանկապատերից մեկը նույնպես կառուցվել է այդ սկզբունքի համաձայն: Շենքը էներգամատակարարման, ջեռուցման ու ջրամատակարարման սեփական հանգույցներն ունի:

Նոր դեսպանատան շինարարությունում աշխատում են 600 հայ բանվոր, 65 թուրքեր, նաեւ 8 ֆիլիպինցի ճարտարապետներ: Շինարարության ղեկավարի բացատրությամբ, թուրք շինարարներին ներգրավել են նկատի առնելով մասնագիտական որակները: Նրանք Սամբուլում նոր են ավարտել ամերիկյան հյուպատոսարանի կառուցման աշխատանքները: Ֆիլիպ Լուն պատմում է, որ հայ շինարարները սկզբնական շրջանում ամենեւին չէին տիրապետում շինարարության արեւմտյան ստանդարտներին, բայց հիմա շատ են հմտացել, եւ հնարավոր է, որ ներգրավվեն այլ դեսպանատների շինարարություններում եւս: Ինչ վերաբերում է վճարման տարբերություններին, դրանք հայ շինարարների համար սահմանվել են նկատի առնելով հայկական աշխատաշուկայի ներկա վիճակը, իսկ թուրքերի ու ֆիլիպինցիների համար այլ չափանիշներ հեռվից են եկել, կտրվել տուն ու տեղից: Համենայն դեպս, Ջոն Օդդուեյը շեշտում է, որ հայ եւ թուրք շինարարների միջեւ բարեկամական հարաբերություններ են հաստատվել:

ԱՄՆ դեսպանը հավաստիացրեց, որ չնայած մասշտաբային փոփոխություններին, անվտանգության ծառայության աշխատակիցների ոչ թվակազմի, ոչ էլ աշխատանքային գործընթացի մեջ փոփոխություններ չեն լինի:

Մի քանի մասնաշենքով ԱՄՆ դեսպանատան նոր շենքը տարածվում է Երեւանյան լճի ափին: Լճի



ԿԱՐԻՆԵ ՂԱՆԻԵԼՅԱՆ

«ԿՐԹԱԿԱՆ ԱՐՏԱԳԱՂԹ»

Ընկլված ուսանողները

«Ուսանողներ կան, որ գնում են, տեսնում են Միացյալ Նահանգները, ընկլվում են եւ չեն ուզում էլ հետ վերադառնալ», ասաց երիտասարդների փոխանակման ծառայության նախագահ Գարիկ Վարդգեսյանը: «Կարծում եմ՝ սրանք խիստ ազգանպաստ են», նման ծրագրերի մասին ասաց Կրթամշակութային աշխատանքային փոխանակման միջազգային ծրագրերի ընկերակցության փոխնախագահ Մանուկ Հարությունյանը:

Երեւանում նման «ազգանպաստ» հասարակական կազմակերպությունները միայն այս երկուսը չեն: Առաջին հայացքից բոլորն էլ գրավիչ անուններ ունեն, բոլորի ծրագրերն էլ խիստ կարեւոր են երկրում ուսանողության մակարդակի բարձրացման համար: «Իմ աշխարհայացքն այնքա՜ն լայնացավ: Փո՜ղ վաստակեցի, ծիվեցի տարբե՜ր մարդկանց հետ», հիացած ասաց մի 20-22 տարեկան աղջիկ, որ ԱՄՆ-ում կազինոյում էր աշխատել եւ ցանկանում էր կրկին գնալ:

Ամերիկյան կառավարության ֆինանսավորմամբ եւ հայաստանյան տարբեր հասարակական կազմակերպությունների միջոցով իրականացվող «Աշխատանք եւ ճամփորդություն» (WAT Work and Travel) ծրագիրը Հայաստանում գործում է արդեն 6-7 տարի: Ծրագրին կարող են մասնակցել միայն պետական բուհերի միջին կուրսերի ուսանողները: Սովորող երիտասարդների արտագաղթին կազմակերպությունները նպաստում են ԱՄՆ-ում ամառային արձակուրդները անցկացնելու, փող վաստակելու, անգլերենի իմացությունները խորացնելու, ճամփորդելու, ամերիկյան արժեքներին ծանոթանալու պատրվակներով: Ուսանողներն այնտեղ աշխատում են սպասարկման ոլորտում՝ հավաքարարներ, ամանլվացողներ, պահակներ, վաճառողներ...

Ծրագիրը սկսվում է հունիսին, ավարտվում նոյեմբերին: Բուհի ցանկացած ուսանող, որ մինչեւ նոյեմբեր դասերին չի մասնակցել, վերադառնալուց հետո խնդիրներ է ունենում բուհի ղեկավարության հետ: Այդ տարիքի տղաները բուհից դուրս մնալու դեպքում անմիջապես անցնում են բանակային ծառայության, իսկ ԱՄՆ-ում մնալով խուսափում են դրանից:

Հինգ տարի գործող Կրթամշակութային աշխատանքային փոխանակման միջազգային ծրագրերի ընկերակցության տվյալներով, այս ընթացքում իրենց կազմակերպությունից ԱՄՆ մեկնած մոտ 500 ուսանողից 35-40-ը չի վերադարձել, երիտասարդների փոխանակման ծառայության տվյալներով՝ գործունեության երեք տարում 150-ից չի վերադարձել 15-20-ը: Երիտասարդների միջազգային փոխանակման ծրագրերի կենտրոնի տնօրեն Գագիկ Միրզոյանը, ֆինանսական գաղտնիք համարելով, չասաց, թե քանի ուսանող են ուղարկել ԱՄՆ, բայց ասաց, որ գնացածների 5 տոկոսը չի վերադարձել:

Փաստորեն, վերջին հինգ տարիներին այս երեք կազմակերպությունների միջոցով ԱՄՆ գնացած ուսանողների 8-9 տոկոսը չի վերադարձել: Երեք կազմակերպությունների ղեկավարներն էլ դրան նորմալ էին վերաբերվում: «Մենք հո չե՞նք կարող ամեն մեկի հետեւից գնալ ԱՄՆ եւ հետ բերել», ասում էին նրանք: Ավելին, Մանուկ Հարությունյանը դա փոքր տոկոս է համարում եւ կարծում է, որ դրա համար չարժե ծրագիրը փակել:

Ծրագիրը վճարովի է: Մասնակցելու համար յուրաքանչյուրը պետք է մուծի 1000-2000 դոլար: Գումարի մեծ մասը տրվում է ԱՄՆ-ում այստեղի կազմակերպությունների հետ համագործակցող ընկերություններին: Հայաստանյան կազմակերպություններին մնում է գումարի 10-25 տոկոսը՝ մոտ 250 դոլար:

Կրթամշակութային աշխատանքային փոխանակման միջազգային ծրագրերի ընկերակցությունը ուսանողի աշխատանքը հսկելու, նրան հետ բերելու համար վերցնում է 500 դոլար, որն ուսանողի՝ ժամանակին վերադառնալու դեպքում վերադարձնում է, հակառակ դեպքում գումարը մնում է կազմակերպությանը, այսինքն՝ անպարտաճանաչ յուրաքանչյուր ուսանողի ԱՄՆ ուղարկելով ընկերակցությունը ստանում է 750 դոլար:

«Մնալ ցանկացողի համար իհարկե 2000 դոլարը շատ փչ փող է», ասաց երիտասարդների միջազգային փոխանակման ծրագրերի կենտրոնի տնօրեն Գագիկ Միրզոյանը:

Հայաստանում ԱՄՆ դեսպանատունը մերժում ստանալու դեպքում ուսանողին է վերադարձվում նրա տված գրեթե ողջ գումարը՝ բացի 100-200 դոլարից: Պարզապես, ըստ Գագիկ Միրզոյանի, ոչ բոլոր դեպքերում են ամերիկյան կազմակերպությունները վերադարձնում գումարները, որի պատճառով այստեղինները սիրված են լինում գումարն իրենց կազմակերպությունից տալ: Եվ քանի որ WAT-ը այլեւս եկամտաբեր ծրագիր չէ, կամաց-կամաց «մեռնում է»:

Այստեղ կարելի է մի փչ ուրախանալ. գուցե գա ժամանակ, երբ բոլոր տեսակի WAT-երը կվերանան: Սակայն մի այլ խնդիր կա: Կազմակերպությունների ղեկավարները այս տարիների ընթացքում կարեր են հաստատել դեսպանատան աշխատակիցների հետ: «Եթե ես կարող եմ շատ ավելի կարճ ժամանակում շենգենյան վիզայի համար 500 դոլար ստանալ, իմ ինչի՞ն է պետք ամբողջ տարին ուսանողների հետեւից ընկնել, մայիսին նոր մի փչ փող ստանալ եւ սպասել մինչեւ մյուս մայիս», ասաց կազմակերպություններից մեկի ղեկավարը:

ԹԱՄԱՐ ՄԻՆԱՍՅԱՆ

Փրկեցին աղջկան

18-ամյա դստերս կույր աղիքի բորբոքումով տեղափոխեցինք հիվանդանոց: Երբեք չեմ մոռանա այն վերաբերմունքը, որ ցուցաբերեցին Սոչիակի քաղաքային հիվանդանոցի վիրաբույժ Դերենիկ Խոյեցյանը, անեսթեզոլոգ Արթուր Դունամալյանը, բուժքույրեր Հերմինե Սուքիասյանը, Նորա Սերոբյանը, Սաթիկ Վարդանյանը: Միայն նրանց մասնագիտական բարձր պատրաստվածությունը փրկեց աղջկան:

ՕՔԵԼՅԱՆ ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սոչիակ քաղաքի բնակչուհի

«Վարդյա հեղափոխությունից» հետո ինչպիսի՞ն կլինեն հայ-վրացական հարաբերությունները

Սկիզբը էջ 1

Վրաստանում տեղի ունեցած բռնի իշխանափոխությունը Հայաստանում տարբեր կերպ է մեկնաբանվում: Այսպես, նախագահամետ մամուլը թմբկահարում է նոյեմբերի 2-ին Վրաստանի խորհրդարանական ընտրություններում տեղ գտած զանգվածային կեղծիքները՝ ենթադրաբար արդարացնելու եւ մոռացության տալու զանգվածային այն կեղծիքները, որոնք տեղ գտան Հայաստանի ընտրություններում: Ընդդիմադիր մամուլը եւ քաղաքական գործիչները, բնականաբար, ողջունում են «վարդյա» հեղափոխությունը՝ ակնկալելով, որ ամերիկացիները վարդեր կնվիրեն նաեւ իրենց:

Այսպես, «Արդարություն» դաշինքի առաջնորդ Ստեփան Դեմիրճյանը «Մեդիամաքս» գործակալությանն ասել է, որ «Վրաստանի վերջին իրադարձությունները կարող են հոգեբանական ազդեցություն ունենալ Հայաստանի վրա, եւ ոչ լեգիտիմ նախագահը պետք է հեռեւություններ անի», հավելելով, որ «շուտով Հայաստանում ընդդիմությունը եւս հաղթելու է»:

Վերոնշյալ երկու տեսակետներն էլ կոնյունկտուրային են, իսկ փաստը, կրկնենք, հետեւյալն է. ամերիկյան «վարդերով» Վրաստանում տապալվել է երկրի օրինական նախագահը, եւ իշխանությունն անցել է մի ժամանակ Շեւարդնաձեի օժանդակությամբ քաղաքական, պետական գործիչներ դարձած «երիտասարդ բարեփոխիչներին»՝ Սաակաշվիլու, Ժվանիայի, Բուրջանաձեի գլխավորությամբ:

Հայաստանի համար հայ-վրացական հարաբերությունները, որոնք վերջին 10-12 տարիներին եղել են բարդ, կենսական նշանակություն ունեն: Պատմական երեւանն այսուհետեւ գործ է ունենալու վրացական նոր իշխանությունների հետ՝ ի դեմս արեւմտամետ «երիտասարդ բարեփոխիչների»:

Արդեն երկուշաբթի երեկոյան Շեւարդնաձեի կողմնակիցներից Իրինա Սարիշվիլին «Սգե» («Արեւ») հեռուստատեսությամբ պետական հեղաշրջման մեջ կրկին ընդգծեց հայկական լոբբիի դերակատարությունը՝ նշելով, թե փորձ է արվում կասպյան խողովակաշարերի ուղին փոխել եւ անցկացնել Հայաստանով:

Սաակաշվիլու, Բուրջանաձեի եւ Ժվանիայի իրական կամ ենթադրյալ հայկական ծագումը կարող է նոր տարաձայնություններ պատճառել հայ-վրացական հարաբերություններին: Այսօր Թբիլիսիում ազգայնական շրջանակներն օգտագործում են «սոմխեթիս ռեւոլյուցիա»՝ «հայերի հեղափոխություն» անունը՝ բնութագրելու նոյեմբերի 22-23-ի պետական հեղաշրջումը: Սաակաշվիլին, Բուրջանաձեն, Ժվանիան, անշուշտ, վրաց քաղաքական, պետական գործիչներ են, սակայն եթե նրանց չհաջողվի Վրաստանում արմատական փոփոխություններ կատարել՝ դրական իմաստով, նեղացնել կոռուպցիայի ծավալները, նվազեցնել քրեական տարրերի գործունեության արեալն ու բազում սոցիալական խնդիրներ, ապա էյֆորիայի մեջ գտնվող վրաց ժողովուրդը հիասթափվելու է պետական հեղաշրջումն իրականացրած գործիչներից: Կասկածելի է թվում, թե եռյակն ի վիճակի կլինի արմատապես բարելավելու իրավիճակը, ինչն ակնկալում է վրաց ժողովուրդը, եւ այդ դեպքում Սաակաշվիլին, Բուրջանաձեն ու Ժվանիան մեղադրվելու են առաջին հերթին հայկական ծագում ունենալու մեջ: Հայ-վրացական հարաբերությունների ապագայի տեսակետից ամենավտանգավորը հենց սա է:

Հեղափոխական եռյակի իշխանության առաջին օրերի գործունեությունը չի խոսում նրանց ժողովրդավարական գործելակերպի մասին: Մայրաքաղաք Թբիլիսիում նրանց կողմնակիցները ջարդուփշուր են անում «Ազորձինեբա» կուսակցության գրասենյակները, ահաբեկում կուսակցության ակտիվիստների ընտանիքներին: Եվ ժողովրդավարական այս գործելակերպը չի սահմանափակվում Թբիլիսիով: Վրաստանի տարբեր երկրամասերում ընդդիմությունը բռնի ուժով զավթում եւ զբաղեցնում է շրջանային վարչակարգերի շենքերը: Օրինակ, նախկին նախագահ Գամսախուրդիայի կառավարությունում ֆինանսների նախարար Գուրամ Աբսանձեն, որ միայն վերջերս է դուրս եկել բանտից, բռնի ուժով զբաղեցրել է Սամեգրելո-Զեմո Սվաներթում Շեւարդնաձեի լիազոր Բոնդո Ջիկիայի գրասենյակը: Վերջինս համարվում է օրինական լիազոր, քանի որ հրաժարական չի տվել կամ չի հեռացվել զբաղեցրած պաշտոնից:

Ի՞նչ ապագա է սպասում Աջարիային, որի տարածքով են բեռնափոխադրումներ իրականացվում դեպի Հայաստան: Ըստ էության, Ասլան Աբաշիձեն փակել է Վրաստանի հետ սահմանները, եւ չի բացառվում, որ Աջարիայի բնակիչները Ռուսաստան մեկնելու համար այլեւս այցագրի կարիք չունենան: Ռուսաստանի եւ Վրաստանի միջեւ արդեն 2 տարի գործում է այցագրային կարգը՝ բացառությամբ «դե ֆակտո» անկախ Աբխազիայի եւ Հարավային Օսիայի: Երեկ Մոսկվայում ՌԴ վարչապետ Մ. Կասյանովի հետ հանդիպումից հետո Աբաշիձեն կրկնել է. «Վրաստանում տեղի է ունեցել պետական հեղաշրջում, եւ այդ դեպքում լեգիտիմության մասին խոսք լինել չի կարող»:

Ի՞նչ ապագա է սպասում վիրահայությանը: Թերեւս այս հարցերն են Հայաստանի համար առաջնային եւ ոչ թե իշխանությունների կամ ընդդիմության նեղ, կոնյունկտուրային շահերը:

ՏԵՍԱԿԵՏ

Անհույս նոստալգիա, որի մեջ է ընկել ընդդիմությունը

Վրացական քաղաքական տրագիկոմեդիան եւ մեր ընդդիմությունը

Հայաստանի ընդդիմության ներկայացուցիչները Վրաստանում կատարված հեղաշրջումից հետո ընկել են մի յուրօրինակ նոստալգիայի մեջ: Նրանք ափսոսում են, որ փետրվարյան նախագահական ընտրություններից հետո չօգտագործեցին իրենց ներուժը նախագահին գահընկեց անելու համար, ինչը ահա հաջողվում է վրացիներին: Գուցե մեր բախտը բերե՞լ է, որ Հայաստանում նախագահական ընտրությունները Վրաստանի դեպքերից հետո չընկան: Սակայն մի քանի առումներով անգամ այդ դեպքում մեր ընդդիմությանն իշխանափոխության հասնել չէր հաջողվելու:

Պատճառներից մեկն այն է, որ ընդդիմության առջեւ առկա էր կազմակերպված իշխանություն, ինչը լիովին բացակայում էր Վրաստանում: Շեւարդնաձեն ըստ էության վերահսկում էր միայն իր նստավայրը եւ իրական ազդեցություն չուներ երկրի ողջ տարածքում եւ ուժային ոլորտներում, ինչը նման իրավիճակներում ուղղակի առանցքային նշանակություն ունի: Նման ազդեցության բացակայությունը ակնհայտ դարձավ, երբ երկրի նախագահի հայտարարած արտակարգ իրավիճակից հետո ոչ Թբիլիսիի հրապարակներից բազմությունը պակասեց, ոչ էլ կոչս հայտարարությունները նվազեցին: Իսկ վերջնական արդյունքում նախագահին ուղղակի սպիտված էր հրաժարական տալ:

Հենց նույն այդ պատճառով Ադրբեջանում ընդդիմությանը չհաջողվեց լուրջ հաջողությունների հասնել, որովհետեւ ուժային համակարգերը երկրում կատարելապես գտնվում էին իշխանության վերահսկողության տակ: Սակայն ի տարբերություն Հայաստանի եւ Վրաստանի՝ Ադրբեջանում ուժային, հատկապես ոստիկանական համակարգը չափից ավելի մեծ գործառույթ էր վերցրել իր վրա, որն ընդհանրապես արգելակեց ընդդիմության «փողոցային» քայլերը:

Ընդհանրապես վրացական դեպքերը շատ կողմերով նման էին 1996 թ. Հայաստանում կայացած նախագահական ընտրություններից հետո ծավալված իրադարձություններին՝ խորհրդարանի գրավում, պատգամավորների ծեծ ու ջարդ եւ այլն: Սակայն ի տարբերություն վրաց ընդդիմության ղեկավարների, օրինակ, Սաակաշվիլու, որը հանրության հետ մնավ խորհրդարան, մեր ընդդիմության առաջնորդներն այն ժամանակ նախընտրեցին փախուստի դիմել՝ հանրությանը միայնակ դեմ առ դեմ թողնելով իշխանության առջեւ: Ի դեպ, նույնը կատարվեց նաեւ Ադրբեջանում, եւ եթե դատելու լինենք այս չափանիշով, ապա վրացական ընդդիմությունը մի քանի անգամ ավելի կազմակերպված, սկզբունքային ու հետեւողական է, քան հարեւան երկու պետությունների նրանց «կոլեգաները»:

Իրականում դա ոչ մի նշանակություն չուներ: Ընդհակառակը՝ այն, որ ընդդիմությունը Հայաստանում չգնաց խորհրդարանի գրավմանը եւ այլ ծայրահեղ քայլերի, ցույց է տալիս, որ սահմանադրության եւ օրինականության շրջանակներում գործելը ավելի կարեւորվեց, քան ամբիցիաներին տուրք տալը, եւ դա ավելի ժողովրդավարական էր, քան այն, ինչ կատարվեց Վրաստանում: Այս տեսակետից ուղղակի ծիծաղելի են դառնում հայտարարությունները, թե Վրաստանին հաջողվեց զերծ մնալ հակասահմանադրական գործողություններից: Միայն այն հանգամանքը, որ Նինո Բուրջանաձեն նախկին Շեւարդնաձեի հրաժարականը հայտարարեց, թե ինքն է սանձնում նախագահի պարականությունները, արդեն իսկ հակասահմանադրական էր երկու շաբաթ պարզ պատճառով: Նախ՝ նախագահը գործում էր, եւ ոչ ոք չէր ապացուցել նրա անգործունակությունը, կամ նա հրաժարական չէր ներկայացրել, եւ երկրորդ՝ կայացել էին նոր խորհրդարանական ընտրություններ, եւ Նինո Բուրջանաձեի լիազորությունները, որպես նախորդ խորհրդարանի նախագահ, դադարեցվել էին նոր խորհրդարանի առաջին նիստով, որն այդպես էլ կիսաս մնաց: Եվ ինքնակոչ նախագահի պաշտոնակատարը անվտանգության խորհրդի նիստ է հրավիրում եւ կոչով հանդես գալիս ժողովրդի առջեւ: Դրա համար անհրաժեշտ էր առնվազն կայացած ընտրությունների արդյունքները ԿԸՀ-ի կողմից անվավեր ճանաչել, ինչն այդպես էլ չեղավ: Եթե մեր ընդդիմությունը կցանկանար այսպիսի հաղթանակ, նրան նախանձել չէր կարելի: Բացի դրանից հազիվ թե կգտնվի որեւէ մեկը, ով կփորձի համոզել, թե զինված խաղաղ փողոցներ դուրս գալը եւ կրակելը սահմանադրության թույլատրելիության շրջանակներում էին: Ոչ Ադրբեջանում, ոչ էլ առավել եւս Հայաստանում ընդդիմությունը նման խայտառակ չդիմեց: Կամ զենք չուներ, կամ ուներ, պարզապես նախընտրեց հրապարակ չհանել: Մինչդեռ Վրաստանում դիմեցին նաեւ այդ քայլին, ինչը ուղղակիորեն ցույց տվեց, որ վրացական ընդդիմության ակտիվ հատվածները իրականացված են: Այս տրամաբանությամբ դատելու պարագայում ստացվում է, որ գալիք իշխանությունները իրական լուրջ պոտենցիալի օժանդակություն ունեն: Դա նույնքան պայթյունավտանգ է, որքան Շեւարդնաձեի անկարողությունը՝ վերահսկելու իրավիճակն ու երկրի տարածքը:

Առավել կարեւոր է այստեղ ժողովրդի գործոնը: Վրաստանում իշխանության եւ հատկապես Շեւարդնաձեի դեմ դուրս էր եկել ողջ ժողովուրդը: Եվ դա հասկանալի է՝ նրանց սոցիալ- տնտեսական կացությունից ելնելով: Ոչ մի հասարակություն չէր հանդուրժի այն պայմանները, որոնք առկա էին Վրաստանում: Ու որքան էլ մեր ընդդիմությունը անընդհատ վկայակոչում է մեր անմխիթար սոցիալական վիճակը, այդ տեսակետից հարեւան երկրները անհամեմատելի հարթություններում են գտնվում: Դրա վրա խարսխվելու եւ հասարակական լուրջ ընբռնություն բարձրացնելու հնարավորությունները վրացական ընդդիմություններն ունեին, որովհետեւ հասարակական բոլոր շերտերն էլ իշխանությունների վարած քաղաքականությունից դժգոհ էին հավասարապես: Մի բան, որ բացակայում էր Հայաստանում եւ ինչու չէ՝ նաեւ Ադրբեջանում: Այս առումով եւս վրացական խնդիրը նմանություններ ունի 1996 թ. հայաստանյան իրականության հետ:

Մինչդեռ ընդդիմությունը Հայաստանում հասարակական նման օժանդակություն չուներ, չնայած մեծաթիվ համակիրներին, որ հիմնականում գործազուրկ կամ ցանկացած իշխանությունից «հավերժ դժգոհ» մարդկանց բազմություն էր: Հետեւաբար անհնար է պատկերացնել, որ այդ բազմությունը կարող էր «հեղափոխություն» իրագործել:

Իսկ ընդհանրապես Վրաստանում կատարված իրադարձություններն այդ երկիրը բազմաթիվ հարցադրումների առջեւ կանգնեցրին: Եվ առաջին խնդիրը սեփական հեղինակության, միջազգային խաթարված վարկի վերականգնումն է: Այս տեսակետից բավականին հետաքրքրական զարգացումներ են սպասվում, քանի որ հին իշխանության հեռանալուց հետո ամբողջ քաղաքական դաշտը Վրաստանում միավորված ընդդիմության ձեռքում է, որի շրջանակներից պետք է նոր նախագահ ընտրվի: Ինչ ներքին ընդդիմություն կծնվի Վրաստանում, առայժմ պարզ չէ, որովհետեւ նախագահի աթոռին հավասարապես հավակնում են միանգամից մի քանի թեկնածուներ, որոնք համագործակցում էին խորհրդարանական ընտրություններում:

Այնպես որ, ամեն ինչ դեռ առջեւում է

ԳՈՌ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

Քաղաքական ռեֆլեմ

Հայաստանում յուրաքանչյուր ընտրությունից հետո հասարակությունն ակամա վերածվում է քաղաքական հուղարկավորի, իսկ հանգուցյալը քաղաքականությունն ինքն է:

Որո՞նք են առհասարակ արդի հայ քաղաքականության իմաստն ու նպատակը, ի՞նչ է տվել կամ տալիս մեզ, նման ընթացքն ինչի՞ կհանգեցնի: Նպատակը մերկանտիլիզմն է, տվածը՝ գոյատեւման կարգավիճակը, հանգեցումը՝ վտանգվող պետականությունը: Ցավոք, անկեղծ չգտնվեցին մեզանում ոչ իշխանությունը, ոչ ընդդիմությունը: Երկուսին էլ իրենը չհամարելով, ժողովուրդը չի վստահում իշխանությանը եւ հիասթափված է ընդդիմությունից: Հասարակությունը մեծ հույսեր էր կապում (հիմա էլ) արտաբեսյան ընդվզումների հետ, բայց վերջինս ոչ այն է պատսիվ գտնվեց մի պահ, ոչ այն է չուզեց ժողովրդին տանել ոիսկի: Ցավոք, ներկա հայ քաղաքականության ծիրից դուրս են քված ժողովուրդն ու ժողովրդավարությունը: Մեզանում քաղաքական որեւէ ուժ (անհաս թե կուսակցություն) ասում է մի բան, կատարում մեկ ուրիշը: Հետեւողականորեն խաբում են մեզ, մենք նույնքան հետեւողական նեցվում ենք խայծին: Խաբում են աջը, խաբում են ձախերը, անկեղծ չենք ազգովին, տառապում ենք շահախնդրությամբ ու դեռ ուզում ենք այս անոմալիայում կայանալ իբրեւ նորմալ պետություն: Չի ստացվի: Ոմանք կարծում են քաղաքականությունում ամեն ինչ կարելի է: Թյուր կարծիք: Սեփական ժողովրդին անտեսելը բումերանգի խորհուրդն ունի: Ինչ խոսք, քաղաքականությունը կանոնակարգված չի լինում, բայց ունի պարագիծ, որից դուրս գալն աղետաբեր է: Ինչ ինչ, ներքաղաքական դաշտը պետք է լինի թափանցիկ՝ առանց ժողովրդից գաղտնիքներ պահելու: Մինչդեռ անգամ իշխանության կուսակցությունները չգիտեն, թե տվյալ պահին քաղաքականության պատվիրատուները վաղվա համար ինչ են ծրագրել: Առկա կուսակցությունների մեծ մասն իր հերթին ներկայանում է խեռոխով բազմացված նույնատիպ, նույնահամ ծրագիր-կանոնադրությամբ, բոլորն էլ առերես ժողովրդաշահ հիմնադրույթներով: Բայց այդ ամբողջության մեջ իրականում ով կամ որ կուսակցությունն է մտահոգ երկրի, ժողովրդի, պետության շահերով, դժվար է ասել: Այդ ո՞ր մեկնաբանը, վերլուծողը, մամուլը նայեց ճշմարտության աչքերին: Անանձնական ոչինչ չդրսեւորվեց մեզանում, եւ արդեն որքան ժամանակ շահախնդրության պատանդ ենք, մինչդեռ մեր աղանդը պետության պատասխանատուն է լիներ: Ժամանակին Վազգեն Սարգսյանը 20 նվիրյալներ էր որոնում կառավարություն բերելու համար. չգտնվեցին այդպիսիք: Բոլորը վազում են փառքի հետեւից, մինչդեռ պետք է գործել այնպես, որ փառքն ինքը կրնկակոխ հետեւի քեզ:

Մի քաղաքական թիափի այս էլ որքան ժամանակ շրջանառվում է: Խոսքն այն մասին է, որ 15 տարի մերթ այս, մերթ այն կառավարությունը, հիմա էլ կոալիցիան պնդում է, թե ստանձնում է պատասխանատվությունը: Բլեֆ: Էդ ո՞ր կուսակցությունը, կառավարությունը կամ նրա անդամը ձախողումների դիմաց պատասխանատվություն կրեցին: Էդ ի՞նչ պատասխանատվության մասին է խոսքը:

Իշխանությունն իր հերթին է ձին քշում առաջ, ընդդիմությունն՝ իր: Երկուսն էլ իշխանությանն են մատնանշում: Նորմալ է: Բայց անընդունելի հակընդդեմ պայքարի ձեւերն են. մեկն զբաղված է ընտրություններ կեղծելով, մյուսը՝ անընդհատ պառակտվելով:

Իշխանությունը երկնչում է Գեղամյանից, նրա դեմ ծառանում՝ անբախույց թե խողածածկ: Չգտնում է նրան ներկայացնել իբրեւ խորհրդավոր անձի, անգամ մեկի, ով իբր թե հարաբերվում է իր հետ: Մարդը ռոբերդամյան ամբիոնից ի լուր աշխարհի դատապարտում է իշխանություն գրպանողներին, իսկ մեզ մոտ չարախոսում են ինչ-որ ծախվածության մասին:

Արտաբեսյանի եւ Ստեփան Դեմիրճյանի ռեյիտինգը ընտրություններից առաջ այն էր, թե՝ ձեր ցավը տանեմ, դուք մեզ ձայն տվեք, մենք ձեր ձայնի տերն ենք, իրավիճակը վերահսկվում է: Չկարողացա՛ն, քանզի իշխանությունը ստասվածից բիրտ էր, իրենք՝ ստասվածից թույլ: Ու մինչ ընդդիմությունը դիմում էր ժողովրդին, Քոչարյանը մտավ նախագահական պալատ: Արդյունքում ունեցանք այս իշխանությունը եւ զանգակատան ժամանակավոր լռություն: Հիմա զանգերը կարծես նորից ղողանջում են...

Անկախության տարիներից այս կողմ քաղաքականության նավի բոլոր կողմերին խվեցինք, բացի մեկից: Ինտրիգը, շառլատանությունը, դեմագոգիան, խաբկանքը, այս ամբողջ տեսակին ճաշակվեց: Մեռանք քաղաքականության ներքին եւ արտաքին ոլորտներում նույն շիյասպին պարելով, մինչդեռ ոչ մեկի մտքով չանցավ, որ էն գլխից մեր առջեւ ծառացած է մի գերխնդիր՝ տնտեսությունը, առանց որի զարգացման կմնանք եւ կլինենք այն, ինչ ենք: Ասել, թե սա չեն հասկանում վերից վար, ճիշտ չէ: Պարզապես շատերի հիմքին դա հարմար չէ, քանզի դրա վերելքն իրենց գրպանի վայրէջքը կնշանակեր: Շուկայական հարաբերություններում քաղաքականությունը տնտեսությունն է: Չկա սա, չի լինի մնացածը: Եվ հետո, չեղավ այնպես, որ մեզանում քաղաքականությունը բարձրացնելով բարձրանար մարդը, եղավ ընդամենը քաղաքականությունը հեծնելու ձգտում: Իսկ վերջինս խրտնած ձի է, չի հանդուրժի:

Ընդդիմության միավորման մասին. Ինչ խոսք, միասնությունն ուժ է, առավել եւս քաղաքականը: Բայց ինչո՞ւ են անմիաբանության հարցում մեղադրում Գեղամյանի թեւին: Դեմիրճյանն իր «Արդարություն» դաշինքով ներառում է մի ամբողջ կոնգլոմերաս, ինչը, բնականաբար, դուր չէր գալու եւ չեկավ Արտաբեսի Գեղամյանին, սա մի պատճառ չընդառաջելու համար, եւ երկրորդը՝ ինչու չմեղադրել Դեմիրճյանին չմիանալու հարցում, ով իր անփորձությամբ եւ մտքի թռիչքով համեմատելի չէ փորձառու քաղաքական գործիչ Գեղամյանի հետ:

Թուրքական սահմանը բացելու մասին. Անգամ գլխի չընկնենք, թե երբ եւ ինչպես շրջանառվեց եւ ինչպես սահունորեն հարցը դուրս մղվեց շրջանառությունից: Եթե հիշում եք, սահմանի բացման գաղափարը մատուցվեց թուրքական կողմից ճիշտ այն պահին, երբ ստեղծվել էր կոնցենսիուս Վրաստանի, Ռուսաստանի եւ Հայաստանի միջեւ աբխազական երկաթգիծը վերաբացելու վերաբերյալ: Խայծը թուրքական կողմից նետվեց աբխազականը մոռացության տալու նպատակով: Թուրքիան չէր կարող վերահսկել աբխազական երկաթուղին, ինչը կնշանակեր Հայաստանի տնտեսության վերելք, հանգամանք, որը Թուրքիայի համար խիստ անցանկալի է: Թուրքական դիվանագիտությունը փաստորեն կանխեց հայանպաստ եւս մի գործառույթ: Իսկ մենք չենք ուզում հասկանալ, որ Թուրքիան երբ ուզի կբացի, երբ ուզի կփակի մեր առջեւ իր սահմանը: Կարճ ասած՝ չհասկացանք, որ մեր հարեւանը կանխեց աբխազական գծի վերաբացման հնարավորությունը:

Ղարաբաղի հարցը. Բոլորը գալիս են իշխանության ու հեռանում իշխանությունից Ղարաբաղի «ծեռամբ»: Ու այդպես կլինի, քանի դեռ գերխնդիրը չի լուծվել: Ղարաբաղը տակավին պահպանում է վճռորոշ գործոնի իր դերը քաղաքական դաշտում: Այն եղել եւ մնում է հաղթական կամարն իշխանության բուրգին հասնելու եւ քաղաքական անկումը բոլոր նրանց համար, ովքեր հարցի լուծումը ձախողելու դեպքում շրջվում են բուրգից ներքեւ: Մի բան ակնհայտ է՝ Ղարաբաղի հարցը սայթաքուն վեմ դարձավ նաեւ Ռոբերտ Քոչարյանի համար, ով, հակառակ իր խոստումների, հարցը հանգեցրել է մի եզրագծի, որտեղից ուրվագծվում է Ղարաբաղի կորուստը: Չկրկնե՞մ՝ Ղարաբաղն այսօր բանակցային կողմ չէ, չկան Ղարաբաղի ժողովրդի անվտանգության երաշխիքները, Հայաստանը դիտվում է որպես ագրեսոր, ահա ոչ հայանպաստ բազմաթիվ հարցերից մի քանիսը, որոնք առաջացան Քոչարյանի իշխանության օրոք:

Ըստ իս, Ղարաբաղի հարցը կպարտադրի երկրորդ պատերազմը, եթե, իհարկե, սկուտեղի վրա չենք ուզում այն վերադարձնել հարեւան երկրին:

Իշխանություն-ընդդիմություն. Սրանք հականիշներ լինելով հանդերձ, հաջորդաբար փոխարինում են մեկը մյուսին: Սա՝ դասական առուով: Իսկ առհասարակ որեւէ երկրում, եթե նրանց տեղերը փոխենք, գործնականում բան չի փոխվի: Պարզապես այն, ինչ ասում է իշխանությունը, կասի ընդդիմությունը եւ հակառակը: Անշուշտ, շահեկան է այն ընդդիմությունը, որն իբրեւ այդպիսին, բացի օբյեկտիվ հիմքեր ունենալուց, կարողանում է ընտրել պայքարի սահմանադրական այն ուղին, որը կցնցի իշխանությանը: Լավ իշխանություն, ինչպես ասում են, չի լինում, լինում է թույլ ընդդիմություն: Իշխանությունը կարող է լինել անարդար, ոչ ժողովրդավարական, ընդդիմությունը դրա իրավունքը չունի: Չպետք է ունենա նաեւ իշխանության գալուց հետո: Այ, հենց սրանից է վախենում հասարակությունը, որի մի զգալի մասը մտածում է՝ կգան նորերը, իրավիճակը չի փոխվի, իզուր ինչու նոր գլխացավանքի մատնվենք: Սա է ողբերգությունը: Հասարակությունը տարակուսում է, եւ նա մեղք չունի, քանզի մեկ անգամ չէ, որ խաբվել է: Այս իրավիճակում է հայտնվել ընդդիմությունը, ով այս անվստահության պատնեշը քանդելու գերխնդիրն ունի:

Վստահության քվեի մասին. Իշխանության հաշվարկը նուրբ էր ու ճիշտ: Այդ նրա թողտվությամբ էր, որ ՍԴ նախագահը թեկուզ եւ առաջարկի կարգով հրամցրեց հայտնի որոշման աղմկահարույց 6-րդ կետը: Դա շատ լավ մտածված քայլ էր, որին կնախանձեին հարեւան երկրների նախագահները: Վեցերորդ կետը խայծ էր, որով հանդարտեցրին հասարակությանը ու հետո էլ ցույց տվեցին եռամաս կոմբինացիան: Վստահության հանրաքվեն այս դեպքում հիշեցնում է այն քաղաքավարենիքը, որով զսպում են չինազանդվող գազանին: Եթե նույնիսկ այսօր ձեռնարկվեր էլ հանրաքվե, համոզված եմ, իշխանությունը դրա պատրաստ սցենարն էլ ունի: Բանը դրան, իհարկե, չի հասնի, հասնի էլ՝ Քոչարյանը դարձյալ ձին քշելու է առաջ: Իսկ արտահերթ նախագահական ընտրություն մեզանում տեղի ունենալ կարող է մի դեպքում, երբ մեծ պետությունները դա ցանկանան, կամ երբ Ղարաբաղը վերադարձվի Ադրբեջանին:

Ցավալին այն է, որ առկա քաղաքական այս ռեֆլեքսը, քաղաքական գործչի բնորոշմամբ, երկրում տիրող համընդհանուր այս ճգնաժամը բնականոն չէ, արդյունք է հանցավոր անտարբերության: Դա է պատճառը, որ ինչքան շուտ վերջ տրվի անտարբերությանը, այնքան լավ: Հայ ժողովրդին նվիրյալներ են պետք, ու այդպիսիք կա՝ հանձինս նրանց, ովքեր երկիրը համընդհանուր ճգնաժամից դուրս բերելու ծրագիր ունեն: Իսկ հայ ժողովուրդը ռեֆլեքսի ժողովուրդ չէ, մանավանդ քաղաքական:

ՏԻԳՐԱՆ ԳԱՍՊԱՐՅԱՆ

«Թավշյա» հեղաշրջումը Վրաստանում որեւէ խնդիր չի լուծել

Հազիվ թե լուծեն կանխորոշված արդյունքներ ընտրությունները

Նոյեմբերի 23-ին նախագահ Էդուարդ Շեւարդնաձեի հրաժարականով Վրաստանում կատարվեց այսպես կոչված «թավշյա» հեղաշրջում: Հրաժարականից մի քանի ժամ անց Վրաստանի ժամանակավոր նախագահ Նինո Բուրջանաձեն ուղերձով դիմեց վրաց ժողովրդին, ապա պատասխանեց CNN-ի հարցերին: Ուղերձում «առանց արյուն թափելու» ճգնաժամը հաղթահարելու մասին արտահայտվող տկն Բուրջանաձեն ամերիկյան հեռուստատեսության հարցերին պատասխանելիս ասաց, որ ինքը հեռամուտ է լինելու Շեւարդնաձեի հրաժարական ստանալ ցուցարարներին: Շեւարդնաձեի պարտավորության մասին դժվար է որեւէ ենթադրություն անել: Բայց որ նրա հրաժարականի հարցում վճռորոշ է եղել Վաշինգտոնի դիրքորոշումն՝ ակնհայտ է: Ահա թե ինչու Շեւարդնաձեի հրաժարականից հետո Վաշինգտոնն իսկույն հայտարարեց, որ սատարում է վրացական ժամանակավոր իշխանություններին: Ավելին՝ այդ մասին տկն Բուրջանաձեին հեռախոսով անձամբ տեղեկացրեց Փաուելը:

Հակառակ դրան ՌԴ նախագահ Վլադիմիր Պուտինը նշեց, որ Շեւարդնաձեն հրաժարական է տվել Աբաշիձեի վերջին ելույթներն են:

Կորնելի կարծիքը պաշտպանում են նաեւ «Նիխոն» կենտրոնի Միջազգային անվտանգության եւ էներգետիկայի ծրագրերի տնօրեն Զեյնո Բարանն ու Հարվարդի համալսարանի կասպյան հետազոտությունների կենտրոնի տնօրեն Բրենդա Շեֆերը: Այն տարբերությամբ, որ նրանք Վրաստանի ամերիկյան կողմնորոշման համար որպես վտանգ տեսնում են ոչ թե առաջիկա նախագահական ընտրությունները, այլ Թբիլիսիի հետ հարաբերություններն ընդհատելու Աբխազիայի որոշումը՝ դա համարելով հնարավոր բախումների նախադրյալ: Բախումների հավանականությունն, ըստ երեւույթին, իրատեսական է թվում նաեւ Սվենք Կորնելին, որ առաջիկա նախագահական ընտրություններից հետո նա «ավելի ժողովրդավարական, բայց ավելի խծծված» Վրաստան է ակնկալում:

Աբխազիան եւ Հարավային Օսիան փաստացի անկախ էին եւ Վրաստանի իշխանություններին առանց այդ էլ չէին ճանաչում: Շեւարդնաձեի հրաժարականից հետո սկսեց նրանց չճանաչել նաեւ Աջարիան: Այս հանգամանքը, ինչ խոսք, համապատասխանում է ընտրություններից հետո Վրաստանն ավելի ժողովրդավարական, բայց ավելի խծծված տեսնելու Կորնելի ակնկալիքներին: Քանի որ արտաքին կողմնորոշումը վերանայելու Վրաստանի հնարավորություններն արդեն սպառված են, իսկ խծծվածությունը վրացական իշխանությունների համար, անկախ նախագահական ընտրությունների արդյունքից, ենթադրում է ավելի ամուր կառչել Վաշինգտոնից, քան Շեւարդնաձեն էր կառչում, ուստի Աբխազիայի, Օսիայի եւ Աջարիայի փաստացի անկախ կացությունը նախընտրելի է նաեւ ԱՄՆ-ի համար, որովհետեւ դա երկիրը վերահսկելու եւ վերահսկողության հարաբերությունն ապահովելու պայմաններ է ստեղծում:

Սակայն կա մի հանգամանք: Դա վերոհիշյալ ինքնավար հանրապետություններում Ռուսաստանի քաղաքական ազդեցությունն է: Ուրեմն ամենեւին պատահական չէ, որ ԱՄՆ-ին հուզում է Աբխազիայում, Օսիայում եւ Աջարիայում ռուսական ազդեցությունը, իսկ Ռուսաստանին՝ հետընտրական Վրաստանում ամերիկյան ազդեցության հետագա ամրապնդումը: Հասկանալի է, որ ե՛ւ ԱՄՆ-ը, ե՛ւ Ռուսաստանը, կանխորոշված համարելով արդյունքները, Վրաստանի առաջիկա նախագահական ընտրություններով չեն հետաքրքրվում: Ուրեմն ինչպիսի անուն էլ տան վրացական հեղաշրջմանը, դա ոչ մի հարց չի լուծելու, արդյունքների կանխորոշվածության պարագան որեւէ հիմք չի տալիս ենթադրելու, որ ընտրություններն են լուծելու: Որովհետեւ խնդիրն ինքը Շեւարդնաձեն չէ, այլ նրա արտաքին քաղաքական կողմնորոշումն ու ռազմավարական կուրսը, որոնք իբրեւ ժառանգություն երկրում մնում են ուժի մեջ:

ՎԱՂՈՒՇ ՉԱՔԱՐՅԱՆ

Դերբակալվել է Եմենում «Ալ Ղաիդայի» առաջին դեմքը

Եմենի ներքին գործերի նախարարությունը հայտարարել է, որ երեքշաբթի օրը երկրում ձերբակալվել է «Ալ Ղաիդայի» առավել բարձրաստիճան անդամներից մեկը՝ Մոհամմադ Համդի ալ Ահդալը: Սանայում հրապարակված ՆԳՆ հայտարարության մեջ նշվում է, որ Եմենի անվտանգության ուժերը «ձերբակալել են Մոհամմադ Համդի ալ Ահդալին, որը հայտնի է նաեւ Աբու Իսսամ ալ Մեքքի անունով եւ «Ալ Ղաիդայի» առավել բարձրաստիճան պատասխանատուներից է»:

Ֆրանսպրեսը հաղորդում է, որ Եմենի հետախուզական ծառայությունները հայտնի ահաբեկչին մի քանի ամիս հետեւելուց հետո Սանայում գտել եւ շրջապատել են այն տունը, որտեղ նա թաքնվում էր: Պաշարումից հետո Մոհամմադ Համդի ալ Ահդալը սիրտը կանգնեցնող անձնատուր էր եղել անվտանգության ուժերին:

Մոհամմադ Համդի ալ Ահդալը ծնվել է 1971 թ. Մեդինայում (Սաուդյան Արաբիա): Նա համարվում է Եմենում «Ալ Ղաիդայի» առաջին դեմքը եւ 2000 թ. Ադենի նավահանգստում ամերիկյան «Քոուլ» ռազմանավի պայթյունի կազմակերպիչներից մեկը: Այն ժամանակ 17 նավաստի էր զոհվել: Եմենի հատուկ ծառայությունները նրան մեղսակից են համարում նաեւ Ֆրանսիական նավթատար նավի անցյալ տարի տեղի ունեցած պայթեցմանը:

Ֆրանսպրեսի տվյալներով, Մոհամմադ Համդի ալ Ահդալը Եմենում «Ալ Ղաիդայի» առաջին դեմք է դարձել Եմենցի Ալի Ղայեդ Սունյան ալ Հարթիի սպանությունից հետո: Չեչնիայում մարտնչելիս մի ոտքը կորցրած ալ Ահդալը վերջին տարիներին բնակվում է Եմենում: Կռվել է նաեւ Բոսնիայում եւ Աֆղանստանում: Ամերիկացիները Եմենը իրենց գլխավոր դաշնակիցներից մեկն են համարում աշխարհում իրենց ծավալած հակաահաբեկչական պայքարում:

Իսրայելը մերժում է ՄԱԿ-ի որոշումը եւ դատապարտում Ռուսաստանին

Իսրայելը Ռուսաստանին պաշտոնական բողոք է հայտնել մերձավորարեւելյան խնդրի կարգավորման նպատակով ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդում Մոսկվայի պատրաստած բանաձեւի առնչությամբ: Իսրայելի արտգործնախարար Իով Բիրանը ԱԳՆ կանչված ՌԴ դեսպանին իր երկրի «դժգոհությունն ու առարկությունն» է հայտնել ռուսական կողմի նախաձեռնության առթիվ:

Ոչթեր գործակալությունը հաղորդում է, որ երեկ Ռուսաստանը ՄԱԿ-ի ԱԽ-ում տարածել է բանաձեւի նախագիծ, որով հավանություն է տրվում միջնորդ քառյակի (ՄԱԿ, ԱՄՆ, ԵՄ, ՌԴ) մշակած մերձավորարեւելյան կարգավորման ծրագրին՝ այսպես կոչված «Ուղեցույցին»: ԱԽ-ն միաձայն քվեարկել է այդ ծրագրի օգտին, ըստ որի մինչեւ 2005 թ. ստեղծվելու է Պաղեստինի պետություն: Փոխարենը Պաղեստինյան ինքնավարությունն Իսրայելին պետք է տրամադրի անվտանգության երաշխիքներ:

Իսրայելը խաղաղ կարգավորման ծրագրի վերահսկողությունը վստահում է միայն իր գլխավոր դաշնակից ԱՄՆ-ին եւ ՄԱԿ-ը համարում է պաղեստինյան կազմակերպություն: Ոչթերը հաղորդում է, որ Թել Ավիվն արդեն մերժել է ՄԱԿ-ի ԱԽ որոշումը: Իով Բիրանի խոսքերով, «համաձայնության կիանգեցնի միայն Իսրայելի եւ պաղեստինցիների ուղղակի երկխոսությունը եւ ոչ թե ՄԱԿ-ի կամ միջազգային մյուս կազմակերպությունների գործունեությունը»:

Երեք շաբաթ առաջ, Իսրայելի վարչապետ Արիել Շարոնի Մոսկվա կատարած այցի ժամանակ խոսվել էր «Ուղեցույցի» մասին: Նախագահ Պուտինը Շարոնին խոսացել էր ՄԱԿ-ում «վերանայել» Ռուսաստանի դիրքորոշումն Իսրայելին առնչվող բանաձեւերի առթիվ, բայց հետագայում Մոսկվան ՄԱԿ-ի ԱԽ ներկայացրեց բանաձեւի նախագիծ, որն Իսրայելը համարում է «թշնամական»: «Մեր կարծիքով, Անվտանգության խորհրդի որոշումն Իսրայելի հանդեպ թշնամական որոշում է», հայտարարեց վարչապետ Արիել Շարոնը:

Նրա խոսքերով, «Ուղեցույցի» ծրագիրը ՄԱԿ-ի ԱԽ-ի տնօրինմանը հանձնելու փորձը «չափազանց լուրջ խնդիր է Իսրայելի համար» եւ սպառնալիքի տակ է դնում հենց «Ուղեցույցի» հաջողությունը:

Մինչդեռ ՄԱԿ-ում Պաղեստինյան ինքնավարության դիտորդ Նասեր ալ Քիդվան հավանություն է տվել բանաձեւին եւ այն անվանել «ջրբաժան մերձավորարեւելյան հաշտության գործընթացի պատմության մեջ»:

Նյու Յորքի օդանավակայանի 25 աշխատակիցներ ձերբակալվել են թմրադեղերի մախինենգության համար

Նյու Յորքի իշխանությունները հայտարարել են, որ Ջոն Քենեդու անվան միջազգային օդանավակայանի վերգետնյա ծառայության 25 աշխատակիցներ են ձերբակալվել թմրադեղերի մախինենգությանը մասնակից լինելու մեղադրանքով:

Խոսացված պարգեւավճարի դիմաց այդ անձինք մախինենգներին օգնել են Գայանայից թմրադեղեր հասցնել ԱՄՆ, շրջանցելով մախակետերը: Գայանայից ժամանած ինքնաթիռի վայրէջքից անմիջապես հետո նրանք որպես բեռնակիրներ եւ տեխնիկներ մտնում էին բեռնահատվածք, վերցնում կոկաին եւ մարիխուանա պարունակող հատուկ բեռները եւ ծառայողական մուտքով դրանք տանում ուղեւորատարահ՝ առանց որեւէ ստուգման:

Օդանավակայանով թմրադեղերի անցման ուղիների բացահայտման գործողությունն սկսվել էր դեռ անցյալ տարի: ԻՏԱՌ-ՏԱՍՍ-ը հաղորդում է, որ միայն այս տարվա սեպտեմբերին է հաջողվել կալանել մախինենգային առաջին բեռը՝ 23 մլն դոլար արժողությամբ 3 տուփ կոկաին:

Նյու Յորքի իշխանությունների ներկայացուցչի տվյալներով, մինչեւ օդանավակայանի հանցավոր ցանցի բացահայտումը մախինենգներին հաջողվել էր ԱՄՆ բերել «տասնյակ միլիոնավոր դոլարներ գնահատվող մի քանի տոննա կոկաին եւ մարիխուանա»:

Ազատության արձանը կվերաբացվի այցելությունների համար

2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչություններից անմիջապես հետո Նյու Յորքում փակվել էր քաղաքի գլխավոր տեսարժան վայրը՝ Ազատության արձանը: Թեեւ արձանը համարվում է ահաբեկիչների նախընտրած թիրախներից մեկը, այդուհանդերձ Նյու Յորքի իշխանությունները որոշել են վերաբացել այն:

Քաղաքագլուխ Մայքլ Բլումբերգի կարծիքով, Ազատության արձանի բացումը նյույորքցիների պատվի գործն է: «Ես գտնում եմ, որ այժմ ահաբեկիչներն ինչ-որ իմաստով շահում են: Մենք չենք կարող դա հանդուրժել: Մենք պետք է բացենք արձանը», հայտարարել է նա մամլո ասուլիսում:

Ներկայումս զբոսաշրջիկները կարողանում են այցելել Ազատության կղզի, բայց հնարավորություն չունեն բարձրանալու այնտեղ գտնվող արձանի դիտահարթակներ: Ոչթեր գործակալության տվյալներով, 2002 թ. կղզի է այցելել 2,7 մլն մարդ. դա 40 տոկոսով պակաս է նախորդ տարիների ցուցանիշից:

Ազատության արձանը կբացվի եկող տարի, հենց որ ավարտվեն դրա անվտանգության ամրապնդմանն ուղղված վերակառուցողական աշխատանքները: Մասնավորապես կառուցվում են լրացուցիչ ելքեր եւ կատարելագործվում են արտակարգ իրավիճակի մասին ծանուցող համակարգերը: Աշխատանքների ընդհանուր ծավալը գնահատվում է 5 մլն դոլար:

Սակայն վերակառուցումից հետո էլ զբոսաշրջիկներին թույլ կտան միայն բարձրանալ պատվանդանի դիտահարթակ եւ մուտք գործել վիթխարի կառույցի ներսը: Իսկ արձանի թագի եւ ջահի մեջ գտնվող հարթակներն առաջվա պես փակ կլինեն այցելուների առջեւ:

Մշակույթ

Նա բանաստեղծ էր իր էությամբ

Կարիկ Պասմաճյանի մասին խոսելիս նա հիմնականում ներկայացվում է որպես արվեստի, հաստկապես՝ գեղանկարչության գիտակ: Այդպես է, բայց դա ամբողջական Կարիկ Պասմաճյանը չէ: Ֆրանսիական եւ ռուսական արվեստագիտական շրջանակները նշում են, որ նա գեղանկարչական աշխատանքների ու սրբապատկերների հրաշալի, անօրինակ հավաքածու ուներ (թեեւ շատ բան նվիրեց բանգարաններին): Չեմ բացառում: Առավել սարսափելի համառությամբ նրա անվան սկզբում հաճախակի դրվում է «ֆրանսիացի կամ ֆրանսահայ միլիոնատեր» խոսքը: Արդյունքում է, եթե անգամ Կարիկը միլիոնների արժեք ունեցող գործերի հետ է առնչվել:

Նա բանաստեղծ էր, ճշմարիտ բանաստեղծ: Բանաստեղծ էր ոչ միայն թերթերով, հայերենով ու անգլերենով ստեղծված իր բանաստեղծություններով, այլեւ հոգով, մտածողությամբ, վարքով, աշխարհն ու մարդկանց գնահատելու իր չափանիշներով: Եվ ինչպես ամեն մի ճշմարիտ բանաստեղծ՝ պայծառաստես էր գոնե իր պարագայում:

23 տարեկանում գրած մի բանաստեղծություն ունի «Աստ հանգչի Կ. Պ.» վերնագրով.

Ճշմարտությունը դեռ շատ է հեռու,
Ինձնից առավել.
Սորողներ, կորցրել կամ մոռացել եք
Մեռելների ճանապարհը:
Չեզնից կանուխ բաժանվելուս
պատճառը
Միայն սա էր:
Ուզում էի ձեզ ուշ տեսնել մի հիչ,
Իսկ այստեղ եղածների հետ

Դեռ ծանոթություն չեմ հաստատել...

Այս տողերը գրվել են 1989 թ. հուլիսի 29-ից 20 տարի առաջ, 1970-ին:

Հիշում եք, չէ՞, որ Պետրոս Դուրյանի հերոսը՝ «Հուսահատ մը», լճակին է նայում, երբ Պետրոս Դուրյանը 21 տարեկան էր: Մեծն Միսաք Մեծարենցը (այս դեպքում չվախենանք «մեծն» բառից եւ հենց տեղին օգտագործենք) իր մասին վկայություններ է տալիս մինչեւ 22 տարեկան դառնալը: Կարիկ Պասմաճյանի Հայտնության գիրը գրվել է 23 տարեկանում:

Մեր մեծերը՝ Պարույր Սեւակը եւ Վահագն Դավթյանը, զարմացել էին Կարիկ Պասմաճյանի հենց Հայտնության տեսիլի ականատեսը լինելով: Եվ բնավ պատահական չէ Պարույր Սեւակի խոսքը, այն Պարույր Սեւակի, ով անասելի ժլատ էր գովեստների ոլորտում. «Բանաստեղծության խնդիրներում չմահավանության չափ խստապահանջ լինելով՝ ես չեմ կարող, այսուհանդերձ, չավետել ի լուր ամենեցուն, որ հանձին Կարիկ Պասմաճյանի համայն հայությունը ստանում է մի նոր, մի իրավ բանաստեղծ: Նա միայն արեւմտահայ կամ արեւելահայ չէ, այլ հայ՝ առանց ստորաբաժանման:

Կարիկ Պասմաճյանը շահեկանորեն զանազանվում է իր սերնդակիցներից. նա թարմ է՝ առանց նորամոլության, բրդուն՝ առանց ջղածգության եւ խոհուն՝ առանց խոհ-արարության»:

Այս խոսքերը գրվեին 1971-ի փետրվարին, չորս տարի անց այն օրից, երբ Կարիկը Երեւան եկավ՝ ուսանելու: 1967-ին ընդունվեց Երեւանի պետական համալսարանի բանասիրության բաժնում: Անդայման տարբերվում էր մեզանից՝ իր կուրսեցիներից՝ երեւանցիներից, աղարանցիներից, գյումրեցիներից... Տարբերվում էր նախ եւ առաջ իր գիտելիքների առատությամբ: Մենք սովետական դպրոց ավարտած խեղճուկրակներս Շարենց գիտեինք լոկ «Լենինն ու Ալիով», Նարեկացու մասին գիտեինք այնքան, որ մեր տատերը մեզ բժկում էին «Նարեկով»: Արեւմտահայ կամ սփյուռքահայ գրականություն գրեթե չգիտեինք, իսկ համաշխարհային արդի գրականության միայն մի քանի հեղինակների անուններն էին ծանոթ մեզ:

Կարիկը ոչ միայն գրականությունը գիտեր, այլ առանց ցավ պատճառելու մեզ ծանոթացնում էր: Գոռոզամտություն, սնապարծություն երբեք չտեսանք իր մեջ: Մեզ հետ խոսում էր՝ ինչպես հավասարը հավասարի հետ:

Բայց նրա ժամանակը սոսկ համալսարանով չէր սահմանափակվում: Նա մեր մեծերի հետ էր նստում, վեր կենում: Եթե Գուրգեն Մահարուն, Պարույր Սեւակին, Համո Սահյանին, Վահագն Դավթյանին պատահաբար հանդիպելը կամ նրանց հանդիպումներին մասնակցելը մեզ համար իսկապես տոն էր, ապա Կարիկ Պասմաճյանը կարճ ժամանակ անց նրանց նախ զրուցընկերը դարձավ, ապա նաեւ՝ լավ բարեկամը: Եթե մենք հիացած հետեւում էինք Լեւոն Ներսիսյանի արտիստիկ եւ իմաստուն խոսքին ու հղարտանում, որ մեր դասախոսն է, ապա մի քանի ամիս հետո Կարիկին տեսնում էինք Լեւոն Ներսիսյանի եւ Երեւանի մյուս ճանաչված մարդկանց հետ սրճարանում նստած:

Պարույր Սեւակին մոտիկից առաջին անգամ տեսել եմ Չեյթունի հանրակացարանի 5-րդ մասնաշենքի 79-րդ սենյակում՝ Կարիկի սենյակում: Ինձ ծանոթացրեց Պարույր Սեւակի հետ: Պատկերացնո՞ւմ եք՝ ինչ կարող էր լինել մի մարդու համար, ով ծանոթանում է Պարույր Սեւակի հետ: Ու ես ներկա եղա նրանց զրույցին: Տասնյակ տարիներ են անցել այդ ժամանակից: Եվ եթե հարցնեք, թե ինչի մասին էին զրուցում Պարույր Սեւակն ու Կարիկը՝ չեմ կարողանա ասել: Անգամ եթե այդ օրը հարցնեին՝ կրկին չէի կարողանա ասել: Ես՝ հմայված, հիանում ու հղարտանում էի այդ պահով. հանրակացարանային փոքրիկ մի սենյակում իմ դասընկերը խոսում էր Պարույր Սեւակի հետ: Ու Պարույր Սեւակն էր եկել Կարիկին հյուր: Պատկերացնո՞ւմ եք...

Կարիկ Պասմաճյանի եւ Պասմաճյան ընտանիքի լավագույն, անդավաճան մարդկանցից մեկը՝ արվեստագիտության թեկնածու, Մատենադարանի աշխատակից Լիլիթ (Էլլա) Զաքարյանը հիշում է. «Կարիկի հետ ծանոթացա այն ժամանակ դեռեւս նրա ապագա կնոջ Վիվիի միջոցով: Վիվին զբաղվում էր միջնադարյան արվեստով եւ եկել էր Հայաստան՝ աշխատելու Մատենադարանում: Ծանոթացանք Վիվիի հետ եւ մտերմացանք, որովհետեւ նա պայծառ անձնավորություն է, ինչպես իր ամուսինը:

Վիվին մի անգամ ինձ հրավիրեց Չեյթունի հանրակացարան, որտեղ բնակվում էր: Եղանք իր մոտ, ապա գնացինք Կարիկի սենյակը: Կարիկի սենյակում էր նաեւ Ալվարդ Պետրոսյանն իր ամուսնու հետ: Ջերմ զրույց ստացվեց: Այդ ժամանակ ես նոր էի լսել անգլիացի մի պոետի՝ Էզրա Փաունդի մասին: Կարիկին հարցրեցի. «Դու Էզրա Փաունդ ունե՞ս»: Ասաց՝ հա, ունեմ: Ու զարմացավ, որ հայաստանցի մի աղջիկ գիտեր Փաունդի մասին...»:

Կարիկն ու Վիվին՝ Վարվառան ջերմ մտերմություն են հաստատում տիկին Լիլիթի հետ: «...Կարիկն ուղղակի տաղանդավոր մարդ էր: Տաղանդավոր բանաստեղծ էր: Դա փաստ է, եւ մեր մեծերն են հաստատել: Բայց նա կողմնորոշվեց դեպի նկարչությունը եւ քանդակագործությունը, Փարիզի կենտրոնում պատկերասրահ ստեղծեց: Երեւանում շատ հաճախ գնում էինք նկարիչների մոտ: Ինչպե՞ս էր դիտում գործը, ի՞նչ կարծիքներ էր հայտնում: Շատ հետաքրքրական էր: Դա ուղղակի զարմանալի բան էր: Նա ընդհանրապես տաղանդավոր մարդ էր»:

«Նկարչությամբ ու քանդակագործությամբ զբաղվելը գուցե եղավ Վիվիի ազդեցության շնորհիվ», ասում եմ:

«Անշուշտ, հաստատում է տիկին Լիլիթը: Վիվին պայծառ մի անձնավորություն է, աննկարագրելի մի մարդ: Կարիկը տաղանդավոր մարդ էր, եւ ինչպես բոլոր տաղանդավորները՝ դժվար մարդ: Բայց թե Վիվին կանացի ինչ մեղմությամբ, ինչ նրբանկատությամբ էր մոտենում Կարիկին՝ ապշել կարելի է: Շատ էր սիրում Կարիկին եւ մինչ օրս էլ սիրում է: Թեեւ Վիվին շատ հմայիչ կին է, սակայն մինչ օրս հավատարիմ է մնացել Կարիկին»:

Լիլիթ Զաքարյանը եղել է 1988 թ. Լենինգրադի երմիտաժում եւ Մոսկվայի Տրետյակովյան պատկերասրահում Կարիկ Պասմաճյանի կազմակերպած ցուցահանդեսներին, հյուրընկալվել է Փարիզում՝ Պասմաճյանների տանը, եղել է «Գորկի» պատկերասրահում:

Այդ ժամանակներում մեզ մոտ՝ Հայաստանում Սեյրան Խաթլամաջյանը, Վիգեն Թադեւոսյանը աբստրակցիա էին անում, որ Ռուսաստանում դեռեւս չկար: Գուցե Խորհրդային Միության համար անչափ ընդարձակ երկրի չափանիշներով Հայաստանի գավառ լինելը մեր նկարիչներին փրկում էր շատ ու շատ փորձություններից: Տիկին Լիլիթը վկայում է, որ Կարիկ Պասմաճյանը շատ լավ էր հասկանում մեր նկարիչների արածի մեծությունն ու հեռանկարայնությունը...

Ով ծանոթ է եղել Կարիկ Պասմաճյանին՝ ուսանող-դասընկեր, նկարիչ, բանաստեղծ, թե որեւէ այլ մասնագիտության տեր մարդ՝ նրան հիշում է որպես արվեստին սիրահարված, խենթանալու աստիճան սիրահարված մեկը: Կենցաղային հարմարությունները նրա համար ոչինչ էին: «Նա կարող էր արվեստի արժեքավոր մի գործի համար աշխարհի վերջը հասնել, վերջին գրոշները ծախսել», ասում է տիկին Լիլիթը:

Եվ եթե այսօր ռուսական մամուլի էջերից (մասնավորապես «Վերսիա», 2000 թ., «Վրեմյա նովոստեյ», 2003 թ.) անթաքույց մեղադրանքներ են հնչում Կարիկ Պասմաճյանի հանցավոր կապերի մասին, ապա դա կարելի է սոսկ չար միտումնավորություն դիտել:

Կարիկ Պասմաճյանի լավագույն բարեկամներից մեկը՝ գեղանկարիչ Վիգեն Թադեւոսյանն ասում է. «Կարիկի նման մարդը կեղտոտ գործարքների մեջ մտնել չէր կարող: Նկարներ առնել-ծախելը բրեական տարր չունի իր մեջ: Մարդը գալերի էր պահում Փարիզի կենտրոնում: Դա շատ մեծ ծախսերի հետ է կապված: Ինքը ժառանգություն չուներ, ամեն ինչ իր ուժերով էր անում... Նա սկսեց գործել Մոսկվայի հետ, որովհետեւ ինչպես Հայաստանից, այնպես էլ Խորհրդային Միության որեւէ այլ հանրապետությունից նկարները դուրս կարող էին գալ միայն Մոսկվայի թույլտվությամբ: Եվ եթե այսօր աշխարհը, ինչու չէ՝ նաեւ Ռուսաստանը, ճանաչում եւ բարձր է գնահատում Տաբակովին, Մորոզովին, Շչուկինին, ապա դա եղել է Կարիկ Պասմաճյանի շնորհիվ: Ռուս այս եւ ուրիշ շատ իմպրեսիոնիստներ առաջին անգամ ցուցադրվել են Կարիկ Պասմաճյանի «Գորկի» գալերիում...»:

Վիգեն Թադեւոսյանին նույնպես գրավել է Կարիկի պոետիկ վարքը:

«Կարիկ Պասմաճյանը պոետ էր, ճշմարիտ պոետ: Բայց պոետը չի կարող իր, առավել եւս իր ընտանիքի կենցաղային հոգսերը հոգալ սոսկ բանաստեղծելով: Այդպիսի ֆենոմեններ կան, բայց դա աբսուրդ է: Բանաստեղծը պետք է իր ընտանիքն ապահովի ուրիշ աշխատանքից ստացած վաստակով: Իսկ երբ այդ ուրիշ աշխատանքն արվեստի հետ է կապված, ուրեմն շահում են բոլորը: Կարիկի պարագայում հատկապես նկարիչների շահածը շատ մեծ է»:

Կարիկ Պասմաճյանի բարեկամներից մեկը՝ Վահագն Դավթյանը, 1976-ին գրեց. «Տարիներ առաջ էր, որ Գուրգեն Մահարու տանը ծանոթացա Կարիկ Պասմաճյանի հետ: Դեռ շատ էր պատանի (թեեւ մորուքավոր), Երուսաղեմից նոր էր եկել հայրենիքում բանասիրություն ուսանելու եւ անգլերենով բանաստեղծություններ էր գրում:

Կարծեմ Մահարին էր, որ հիշեցրեց էմիլ Վերհարնի խոսքն՝ ասված Կոստան Զարյանին. բանաստեղծություն պետք է գրել այն լեզվով, որով աղոթել է մայրդ...

Շուտով Կարիկը սկսեց գրել այն լեզվով, որով աղոթել է մայրը...

Վերհարնի խո՞սքն էր այդքան ազդել վրան: Հազիվ թե: Կարծում եմ, որ մոտիկ ընտանեկան հաղորդությունը մայրենի լեզվին, հայրենի հողին, նրա հին ու նոր մշակույթին, ներքին մղում էին դարձել, ստիպել նրան «վերադառնալու դեպի իր սկիզբը», գրելու մայրենի լեզվով, այն էլ արեւելահայերեն:

Այդ վերադարձը հայտնությունն էր մի նոր հայ բանաստեղծի, որի ամեն ինչը սեփական է՝ ձայնը, մտածելակերպը, աշխարհը...

Քաջ ծանոթ լինելով ժամանակակից արեւմտյան պոետիկային եւ ամենեւին չգայթակղվելով նրա ծայրահեղություններով, Կարիկ Պասմաճյանը չունի ոմանց այն մոլորությունը, թե իբր ժամանակակից պոետիկան պիտի կառուցված լինի միայն մտքի կոնստրուկցիաներով: Նա իր բանաստեղծության դռները բաց է պահում զգացմունքի առաջ, եւ այդ զգացմունքն է, որ հաճախ խտանում եւ նրա մոտ դառնում է միտք ու պատկեր: Եվ դրա շնորհիվ է, անշուշտ, որ նրա զուսպ տողերի տակից զգացվում է ներքին գեղեցիկ այրումը»:

Ահա այսպես ենք տեսել Կարիկ Պասմաճյանին: Եվ ուրիշ այլ կերպ նրան տեսնելը մեղանչում է Աստծո առաջ:

ՍԵՐԳԵՅ ԳԱԼՈՅԱՆ

ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀԱՅՐԵՆԻՔՈՒՄ

Սալբի Դարաֆչյանը՝ երեւանյան հանդիսականին

Բանաստեղծությունը ներքին վիճակ է կամ աշխարհի հետ ներդաշնակություն ստեղծելու մի ձեւ Սալբի Դարաֆչյանի համար: Մասնագիտությամբ ֆիզիկոս, էությամբ արտիստուհի է նա՝ բանաստեղծական ներշնչումներով:

Ծնվել եւ ուսում է ստացել Հալեպում՝ հայեցի կրթությամբ, մեծացել հայաշունչ մթնոլորտում, մտավորական ընտանեկան հարկի տակ: Մանկուց սիրել է արվեստը՝ թատրոնն ու պոեզիան: Երկար տարիներ մասնակցում է Հալեպի ՀԲԸՄ-ի «Ադամյան» թատերախմբի ներկայացումներին՝ հանդես գալով բազմաթիվ դերակատարումներով: Հայ բանաստեղծությունը ներկայացրել է սփյուռքահայ շատ համայնքներում, ասմունքով հանդես է եկել Հալեպում, Բեյրութում, Միլանում, Վալանսում, Լիոնում, Կիպրոսում: Հալեպում Թեքեյանի ծննդյան 125-ամյակին նվիրված հանդիսությանը հրաշալի ելույթից հետո հրավիրվեց Երեւան՝ մասնակցելու բանաստեղծի ծննդյան հոբելյանական հանդիսությանը եւ արժանացավ ջերմ ընդունելության:

Օրեր առաջ ՀԳՄ մեծ դահլիճում Սալբի Դարաֆչյանն առաջին անգամ հայաստանցի ունկնդրին ներկայացավ ամբողջական ծրագրով՝ ընդգրկելով արեւմտահայ եւ սփյուռքահայ քնարերգության գեղեցիկ մի ընտրանի: Բեյրութի «Սիփան» հրատարակչատան տնօրեն, գրող Արամ Սեփեթճյանը արտիստուհուն ներկայացրեց իբրեւ բանաստեղծության նկատմամբ պաշտամունքի հասնող սեր ունեցող հայուհու, որն իր ներաշխարհն ասմունքի միջոցով բացելով ունկնդրի առաջ, բանաստեղծությունների ընտրությամբ արդեն իսկ պատմում է իր խոհերի, զգացմունքների, հոգեվիճակների մասին:

Այդ օրը Սալբին երեւաց իր ներքին հմայքով ու ջերմությամբ: Բանաստեղծական ամեն պատկեր վերապրված ու ըմբռնված էր՝ լիներ սեր, հոգեկան տվայտանք, կսկիծ, մորմոք թե ցավ, երազ, թե ահասարսուռ նախճիրի պատկեր, հուսահատ ճիչ, թե ընդվզում:

Ընտրված բանաստեղծություններն արտիստուհու գրական ճաշակն ու նախասիրությունն էին ներկայացնում՝ որքան՝ քնարական, երազային, խոհական, նույնքան՝ մարտնչող, ընդվզող, չհամակերպվող: Ինքն ասես թարգմանում կամ սեփական հոգին փորձում էր պեղել սիրելի բանաստեղծների միջոցով՝ հոգեհարազատությունը հիմնականում արեւմտահայ եւ սփյուռքահայ բանաստեղծների մեջ փնտրելով: Եվ ընտրությունը պատահական նախասիրությամբ չէր կատարված: Արտիստուհուն հաջողվեց ստեղծել ներքին տրամաբանությամբ ընթացող դինամիկ կոմպոզիցիա՝ խոհաքնարական-ապրումը, անհատի հոգու դրաման, համազգային վիշտն ու ցավը, ապա եւ ընդվզումն ու նահանջը, պայքարի ճիգը ներկայացնել իբրեւ հայի տարագիր ճակատագրի անցյալի ու ներկայի պատմություն: Դուրյանի, Մեծարենցի, Ռ. Սեւակի, Վարուժանի, Սիամանթոյի ու Խրախունու, Զարիֆյանի, Զահրատի, Շահնուրի ու Թեքեյանի ստեղծագործությունները Սալբի Դարաֆչյանի մեկնաբանությամբ հնչեցին իբրեւ հայ մարդու տրամադրությունների այժմեական արձագանքներ:

Այդպիսին են մեծերը, երբեք չեն հնանում, ափսոս, որ ժամանակի «կոշտ հանգույցներում» բանաստեղծության հմայքն աստիճանաբար խամրում է:

ՄԵԼԱՆՅԱ ԲԱԴԱԼՅԱՆ

Ստեփանակերտցի ուսուցչի հեղինակումը

Ստեփանակերտում լույս է տեսել Նաիրա Թամրազյանի հեղինակած «Հայոց լեզվի հարանունների ուղղագրական-բացատրական բառարանը»: Երեւույթն ավելի նշանակալից է, քան դրա իրադարձային նշանակությունը, որովհետեւ առաջին ագամ, գոնե արցախահայ իրականության մեջ, գիտական լուրջ աշխատություն է գրել սովորական ուսուցչուհին: Սովորականն այստեղ ընդգծելի է՝ նրա կարգավիճակի առումով. Նաիրա Թամրազյանը Ստեփանակերտի թիվ 7 միջնակարգ դպրոցի հայոց լեզվի եւ գրականության ուսուցչուհի է: Մինչդեռ մենք սովոր ենք, կարծես, գիտարժեք գրքեր ակնկալել միայն կոչումավոր հեղինակներից:

Անշուշտ, Արցախում գիտական որոշակի արժեք ներկայացնող գրքեր գրվում ու հրատարակվում են, բայց վերոհիշյալ բառարանի նշանակությունը գնահատելի է հենց բնագավառային առումով: Բառարանագրությունն այն դժվար ձեռնարկումն է, որը ենթադրում է գրականագիտական եւ լեզվագիտական անսպառ իմացություն: Գումարած՝ սուր հիշողությունը եւ, իհարկե, ամենօրյա աշխատասիրությունը: Այս բոլորն ունի Ն. Թամրազյանը, այլապես հնարավո՞ր է հայ գրականության գանձարանից այդքան մեծաթիվ ստեղծագործություններ մեջբերել, ընդգրկելով դասական, ժամանակակից, նաեւ արդի սփյուռքահայ գրողներին, այդ երկերից ընտրել անհրաժեշտ բառերը եւ դարձնել գիտական ուսումնասիրության նյութ:

Բառարանները մի անուրանալի առաքելություն ունեն՝ հարստացնում են տվյալ ժողովրդի լեզուն: Ցավոք, մենք ասիճանաբար օտարախոս ենք դառնում, դա չգիտես ինչու պատճառաբանելով քաղաքակրթության նորամուծություններին ինտեգրվելու անհրաժեշտությամբ: Ն. Թամրազյանի կազմած բառարանի շուրջ 2086 բառերն իրենց բացատրություններով նույնպես հարստացնում են մեր լեզուն՝ վերարժեքավորելով հայերենի բազմադարյան ընթացքը:

Եվ մի մտահոգիչ շեշտադրում. վերոհիշյալ բառարանը դժբախտաբար սակավ հասու է հայաստանաբնակ (եւ ինչու միայն) ընթերցողին: Առհասարակ, Ստեփանակերտում հրատարակվող գրքերը հիշ են հասնում Երեւան, մինչդեռ նույն երկրում կոգիացած գիտություն կամ գրականություն չի լինում: Հարկավոր է գտնել գործնական մեխանիզմներ: Խոստովանենք, դա միայն հեղինակի գործը չէ:

ԿԻՄ ԳԱԲՐԻԵԼՅԱՆ,
Ստեփանակերտ

«Արսենալը» յուրօրինակ ռեւանշի հասավ

«Մոնակոն» 1/8 եզրափակիչի ուղեգիր նվաճեց

Չեմպիոնների լիգայի խմբային մրցաշարի 5-րդ տուրի հանդիպումներն անցկացրին «A», «B», «C» եւ «D» խմբերում ընդգրկված թիմերը: Այդ հանդիպումներից հետո հայտնի դարձավ 1/8 եզրափակիչի եւս մեկ մասնակից: Դա Ֆրանսիայի առաջնության միանձնյա առաջատար «Մոնակոն» է, որը հաջող է հանդես գալիս նաեւ չեմպիոնների լիգայի մրցաշարում՝ գլխավորելով «C» խմբի աղյուսակը: «Մոնակոն» հերթական խաղում սեփական հարկի տակ ոչ-ոքի (1-1) ավարտեց հանդիպումը «Էյնդհովենի» հետ: Առաջին խաղակեսում Մորյենտեսը գլխի հարվածով բացեց հաշիվը՝ խփելով չեմպիոնների լիգայի մրցաշարում իր 4-րդ գոլը: Հոլանդիայի ֆուտբոլիստները պարտությունից խույս տվեցին խաղավարից 6 րոպե առաջ, երբ Վենեգորը հավասարեցրեց հաշիվը: Պայքարը շարունակելու լավ հնարավորություններ է պահպանում «Դեպորտիվոն», որը սեփական հարկի տակ 3 անպատասխան գնդակ խփեց ԱԵԿ-ի դարպասը: Ավարտական տուրում ուշադրության կենտրոնում կլինի «Էյնդհովեն»-«Դեպորտիվո» հանդիպումը: Այդ խաղում հոլանդացիներին 3 գնդակի տարբերությամբ հաղթանակ է անհրաժեշտ, քանի որ առաջին խաղում իսպանացիներին զիջել էին 0-2 հաշվով: «Դեպորտիվոն» առայժմ անհաջող է խաղում մրցակիցների դաշտերում: Թիմը 3-8 հաշվով զիջել է «Մոնակոյին», իսկ ԱԵԿ-ի հետ հանդիպումն ավարտել է ոչ-ոքի (1-1):

Հինգերորդ տուրի հանդիպումներից հետո բավական խճճված իրավիճակ է ստեղծվել «B» խմբում: Բոլոր չորս թիմերն էլ հնարավորություն ունեն պայքարելու հաջորդ փուլի ուղեգրի համար: Առայժմ միայն պարզ է այն, որ «Լոկոմոտիվը» պայքարը կշարունակի կամ չեմպիոնների լիգայի 1/8 եզրափակիչում, կամ ՈՒԵՖԱ-ի գավաթի մրցաշարում: Մեծ հետաքրքրությամբ էր սպասվում «Լոկոմոտիվի» մրցավեճը Կիեւի «Դինամոյի» հետ: Խաղն անցավ դրամատիկ ու լարված մրցայքարում: «Լոկոմոտիվը» խաղի ընթացքում երկու անգամ հաշվի մեջ առջեւում էր ընթանում, սակայն երկու դեպքում էլ կիեւցիներին հաջողվեց վերականգնել հավասարակշռությունը: Խաղի ելքը վճռվեց վերջին րոպեին; երբ ընդամենը 7 րոպե առաջ փոխարինման դուրս եկած Պարկսը հաղթանակ պարգեւեց «Լոկոմոտիվին»: Ավելացված ժամանակահատվածում Պարկսը կարող էր նաեւ 3-րդ գոլը խփել, սակայն մեն-մենակ դուրս գալով դարպասապահի դիմաց, չկարողացավ գրավել դարպասը: Հաղթելով 3-2 հաշվով, «Լոկոմոտիվը» գլխավորեց աղյուսակը: Խաղից հետո կայացած մամուլի ասուլիսում Յուրի Սյոմինը նշել էր, որ նման հետաքրքիր ու գրավիչ մրցայքարի վաղուց ականատես չէր եղել: Նրա կարծիքով, երկու թիմերն էլ կարող էին հաղթել: Իսկ ահա Կիեւի «Դինամոյի» գլխավոր մարզիչ Ալեքսեյ Միխայլիչենկոն դժգոհ էր մրցավարությունից: Ըստ նրա, երկու թիմերն էլ լավ խաղ ցուցադրեցին, երկուսն էլ արժանի էին հաղթանակի, սակայն ցավալի էր, որ խաղի վերջին րոպեներին գոլ բաց թողեցին ու պարտվեցին:

Խոշոր անակնկալ գրանցվեց Միլանում, որտեղ «Ինտերը» անսպասելի հաշվով (1-5) զիջեց «Արսենալին»: Այս հաղթանակի շնորհիվ «Ինտերի» ուղեգիր նվաճելու հնարավորությունները զգալիորեն աճեցին: Արսեն Վենգերի սաները յուրօրինակ ռեւանշ վերցրին առաջին շրջանում սեփական հարկի տակ «Ինտերից» կրած պարտության դիմաց (0-3): Իտալացիների ջախջախման սկիզբը դրեց Անրին: Ճիշտ է, Վիերին հավասարեցրեց հաշիվը, սակայն դա այդ խաղում իտալացիների միակ գոլն էր: Հետագայում Յունգբերգը, Անրին, Էդուն եւ Պիրեսը եւս չորս անգամ գրավեցին «Ինտերի» դարպասը:

Ավարտական տուրում տեղի կունենան «Արսենալ»-«Լոկոմոտիվ» եւ «Դինամո»-«Ինտեր» հանդիպումները, որոնք էլ կանվանեն բաղձալի ուղեգրերի 2 տերերին:

«D» խմբում կայացավ ընդամենը մեկ հանդիպում: «Օլիմպիակոսն» ու «Ռեալ Սոսյեդադը» ոչ-ոքի ավարտեցին խաղը (2-2): Հույները զրկվեցին հաջորդ փուլի ուղեգրից, իսկ ահա «Ռեալ Սոսյեդադի» հնարավորություններն աճեցին: Թուրքիայում տեղի ունեցած ահաբեկչության հետեւանքով ՈՒԵՖԱ-ն հետաձգել էր «Գալաթասարայի» եւ «Յուվենտուսի» հանդիպումը: Նախատեսվում է այն անցկացնել դեկտեմբերի 2-ին, չեզոք դաշտում:

«A» խմբում եւս ամեն ինչ կվճռվի ավարտական տուրում: «Անդերլեխտի» ֆուտբոլիստները սեփական հարկի տակ 1-0 հաշվով պարտության մատնեցին «Լիոնին»: Ֆինն պաշտպան Տիխինենի խփած միակ գոլը «Անդերլեխտին» պայքարը շարունակելու լավ հնարավորություն ընձեռեց: Այժմ ուղեգիրը նվաճելու համար բելգիացիներին անհրաժեշտ է վերջին տուրում Մյունխենում չպարտվել «Բավարիային»: Վերջինս Շոտլանդիայում ոչ-ոքի (0-0) ավարտեց հանդիպումը «Սելթիկի» հետ: «Բավարիային» ավարտական խաղում «Անդերլեխտի» նկատմամբ անպայման հաղթանակ է անհրաժեշտ: «Լիոն»-«Սելթիկ» խաղն էլ վճռորոշ նշանակություն ունի:

Մրցաշարային աղյուսակներ

«A» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Սելթիկ	5	2	1	2	6-4	7
2. Անդերլեխտ	5	2	1	2	4-5	7
3. Լիոն	5	2	1	2	4-5	7
4. Բավարիա	5	1	3	1	5-5	6

«B» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Լոկոմոտիվ	5	2	2	1	7-5	8
2. Արսենալ	5	2	1	2	7-6	7
3. Ինտեր	5	2	1	2	7-10	7
4. Դինամո	5	2	0	3	7-7	6

«C» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Մոնակո	5	3	1	1	15-6	10
2. Դեպորտիվո	5	3	1	1	10-9	10
3. Էյնդհովեն	5	2	1	2	5-5	7
4. ԱԵԿ	5	0	1	4	1-11	1

«D» խումբ

	Խ	Հ	Ո	Պ	Գ	Մ
1. Յուվենտուս	4	3	1	0	8-4	10
2. Ռեալ Սոսյեդադ	5	2	2	1	7-7	8
3. Օլիմպիակոս	5	1	1	3	6-6	4
4. Գալաթասարայ	4	1	0	3	3-7	3

Օլիմպիական ջահը կրջագայի օլիմպիական մայրաքաղաքներով

ՄՕԿ-ի նախագահ ժակ Ռոգեն Աթենքում Հունաստանի նախագահ Կոստիս Ստեֆանոպուլոսի եւ վարչապետ Կոստաս Սիմիտիսի հետ հանդիպումներում կքննարկի օլիմպիական խաղերի նախապատրաստության հարցը: Միաժամանակ օլիմպիադա-2004-ի կազմկոմիտեի հետ կքննարկվի ու կճշտվի օլիմպիական ջահի երթուղին:

Նախատեսվում է, որ օլիմպիական ջահի փոխանցումավազքը կտեւի 65 օր: Օլիմպիական ջահն իր երթուղին կսկսի նախորդ օլիմպիադայի մայրաքաղաքից Սիդնեյից: Փոխանցումավազքը կսկսվի հաջորդ տարվա ամռանը: Սիդնեյից մարզիկների շարասյունը կուղեւորվի Մելբուռն, այնուհետեւ կանցնի Տոկիոյով, Սեուլով եւ Պեկինով: Հետագա երթուղին կընդգրկի Քեյփթաունը, Ռիո դե Ժանեյրոն, Մեխիկոն, Նյու Յորքն ու ամերիկյան մի քանի այլ քաղաքներ: Այնուհետեւ օլիմպիական ջահն իր շրջագայությունը կշարունակի Եվրոպայում: Ընդհանրապես նախատեսված է այցելել այն քաղաքները, որոնք ժամանակին օլիմպիական խաղերի մայրաքաղաք են հանդիսացել: Օլիմպիական ջահը «կհյուրընկալվի» Փարիզում, Հռոմում, Բեռլինում եւ Մոսկվայում: Վերջինս կլինի եվրոպական վերջին մայրաքաղաքն օլիմպիական ջահի երթուղում: Այնուհետեւ Կիպրոսով ջահը կբերվի Աթենք:

ԲԱՍԿԵՏԲՈԼ

Ժամկետները հայտնի են

Հռոմում անցկացված բասկետբոլի եվրոպական ֆեդերացիայի գործկոմի նիստում որոշվել են մարզաթեւի եվրոպայի առաջնության ընտրական եւ եզրափակիչ փուլերի անցկացման վայրերն ու ժամկետները: Տղամարդկանց առաջնությունը տեղի կունենա Սերբիայում 2005 թ. սեպտեմբերի 23-ից հոկտեմբերի 2-ը: Այն կանցկացվի չորս քաղաքներում՝ Նովի Սադում, Վրշացում, Պոդգորիցայում եւ Բելգրադում: Եվրոպայի առաջնության եզրափակիչ փուլի ուղեգրերի համար պայքարը կսկսեն 19 թիմեր, որոնք կբաժանվեն 5 խմբի (4 խմբերում՝ 4-ական մասնակից, մեկ խմբում՝ 3): Եզրափակիչի ուղեգիր կնվաճեն խմբերում լավագույն արդյունքի հասած 2-ական թիմեր: Անհաջողության մատնված մյուս 9 ակումբները հնարավորություն կունենան լրացուցիչ ընտրական մրցաշարում պայքարելու ուղեգրերի համար: Ընտրական մրցաշարի մասնակիցների վիճակահանությունը տեղի է ունենալու դեկտեմբերի 13-ին Բելգրադում: Հունաստանի, Իտալիայի, Լիտվայի, Իսպանիայի, Սերբիայի եւ Չեռնոգորիայի հավաքականները որպես ավելի բարձր վարկանիշ ունեցող թիմեր, ազատված են որակավորման փուլի հանդիպումներից:

Բասկետբոլի եվրոպայի կանանց առաջնությունը կանցկացվի 2005 թ. սեպտեմբերի 9-18-ը Թուրքիայի Անկարա, Բուրսա եւ Իզմիր քաղաքներում: Որոշվել են նաեւ մայրցամաքի երիտասարդական եւ պատանեկան առաջնությունների մրցավայրերը: Մինչեւ 20 տարեկան երիտասարդների առաջնությունը կանցկացվի Բոնոյում հուլիսի 23-ից օգոստոսի 1-ը, աղջիկների առաջնությունը նույն ժամանակահատվածում կկայանա Ֆրանսիական Սենկ Բրե քաղաքում: Մասնակիցների վիճակահանությունը տեղի կունենա Փարիզում:

Շաբիշը՝ Հունգարիայի լավագույն ֆուտբոլիստ

Գերմանական «Շտուտգարտի» հարձակվող Իմրե Շաբիշը ճանաչվել է Հունգարիայի այս տարվա լավագույն ֆուտբոլիստ: Մարզական լրագրողների անցկացրած հարցման արդյունքներով 22-ամյա ֆուտբոլիստը վաստակել է 155 միավոր: Նա գերազանցեց «Վերդերի» կիսապաշտպան Քրիստիան Լիստեին, որը լավագույնն էր ճանաչվել անցյալ տարի: Երրորդ տեղում «Ֆերենցվարոշի» դարպասապահ Լայոշ Սյուշն է: Անցյալ տարի Իմրե Շաբիշով հետաքրքրվում էր Մոսկվայի «Սպարտակը»: Ընթացիկ մրցաշրջանում Շաբիշը արդյունավետ խաղ է ցուցադրում: Բունդեսլիգայում անցկացրած 10 հանդիպումներում նա դարձել է 4 գոլի հեղինակ, իսկ չեմպիոնների լիգայի մրցաշարի 4 հանդիպումներում 2 անգամ գրավել է մրցակիցների դարպասները:

Վերախաղարկում «Ազնիվ խաղի» սկզբունքը խախտելու համար

Բելգիայի գավաթի խաղարկության «Լյերս»-«Միլեն» հանդիպումը, որն ավարտվել էր առաջին դիվիզիոնում հանդես եկող «Լյերսի» ֆուտբոլիստների հաղթանակով, երկրի ֆուտբոլի ֆեդերացիայի որոշմամբ պետք է վերախաղարկվի: Պատճառն այն է, որ խաղի ընթացքում «Լյերսի» ֆուտբոլիստները խախտել են «Ազնիվ խաղի» սկզբունքը: 2-2 հաշվի ժամանակ «Միլենի» դարպասապահը գնդակը դաշտից դուրս էր հանել, որպեսզի բժիշկները հնարավորություն ունենային օգնություն ցույց տալու իր խաղընկերոջը: Մրցակցի ֆուտբոլիստները եզրային նետումով խաղը վերսկսելուց հետո փոխանակ գնդակը հանձնեին «Միլենին», գրոհ ձեռնարկեցին եւ խփեցին հաղթական գոլը: Ինչպես հայտնի է, նման դեպքերում «Ազնիվ խաղի» չգրանցված օրենքի համաձայն, գնդակը հանձնվում է մրցակցին:

Նման դեպք էր տեղի ունեցել նաեւ 1999 թ. Անգլիայի լիգայի գավաթի մրցաշարում «Արսենալի» եւ «Շեֆիլդի» միջեւ կայացած խաղում: Հանդիպումն ավարտվել էր «Արսենալի» օգտին (2-1): Խաղը կրկին վերախաղարկվել էր:

Իսկ ահա ֆուտբոլի եվրոպայի առաջնության ընտրական մրցաշարի Իռլանդիա-Ալբանիա հանդիպումը չվերախաղարկվեց, թեեւ այդ մրցամարտում էլ իռլանդացիներն էին վերջին րոպեներին խախտել «Ազնիվ խաղի» սկզբունքը՝ խփելով հաղթական գնդակը (2-1):

Սվետլանա Ֆեոֆանովան լավագույն թեթեւատլետն է

Չողաքսկի աշխարհի ռեկորդակիր մոսկվացի Սվետլանա Ֆեոֆանովային Ռուսաստանի թեթեւ atլետիկայի ֆեդերացիան ճանաչել է տարվա լավագույն թեթեւատլետ: Այս տարվա աշխարհի ծմեռային առաջնությունում, որն անցկացվել էր Բիրմինգհեմում, Ֆեոֆանովան մարզասրահների համար նոր ռեկորդ էր սահմանել (4 մ 80 սմ): 22-ամյա մարզուհին Փարիզում անցկացված աշխարհի ամառային առաջնությունում ամերիկուհի Ստեյսի Դրագիլայի եւ Ելենա Իսինբաեւայի հետ մրցավեճում նվաճել էր ոսկե մեդալ:

Հարցման արդյունքներով 2-րդ տեղը գրավել է եռացատկորդուհի Տատյանա Լեբեդեւան, 3-րդ տեղը զբաղեցրել է նիզականետորդ Սերգեյ Մակարովը:

Ֆուտբոլիստներն ընկան կրճատման տակ

110-ամյա պատմություն ունեցող շոտլանդական «Դանդի» ֆուտբոլային ակումբը ֆինանսական խոր ճգնաժամ է ապրում: Դրա հետեւանքով օրերս ակումբի նոր ղեկավարությունը ստիպված էր հայտարարել թիմից 20 ֆուտբոլիստների ազատման մասին: «Կրճատման» տակ հայտնված ֆուտբոլիստների թվում են նախկինում հանրահայտ իտալացի ֆուտբոլիստ Ֆաբրիցիո Ռավանելին, Խուան Սարան, Քրեյգ Բաուլին, Ֆաբիան Կաբալյերոն եւ Գեորգի Նեմսաձեն: Ներկայում «Դանդիի» ընդհանուր պարտքը կազմում է 20 մլն ֆունտ ստեռլինգ:

Հանցագործների անունները հրապարակվել են

Բրիտանական ոստիկանությունը հրապարակել է Անգլիայի պրեմիեր-լիգայի ակումբների այն երկու ֆուտբոլիստների ազգանունները, ովքեր մեղադրվում են անցած ամիս Լոնդոնի հյուրանոցներից մեկում 17-ամյա մի աղջկա բռնաբարելու համար: Առաջինը «Նյուքասլի» 22-ամյա պաշտպան Տիտուս Բրամբելն է, երկրորդը «Չելսիի» 19-ամյա հարձակվող Կառլտոն Կոուլն է, որը ներկայում վարձավճարով հանդես է գալիս «Չարլտոնում»:

Էջը պատրաստեց ԱՐՈՍ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆԸ

Նոր ոսկե հուշադրամ

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը նոյեմբերի 24-ից շրջանառության մեջ է դրել Հայոց Տիգրան Մեծ (մ.թ.ա. 95-56 թթ.) արքային նվիրված 1000 դրամ անվանական արժեքով ոսկե հուշադրամը:

Հուշադրամն իր ձեւավորմամբ ու արտաքին տեսքով Տիգրան Մեծի արծաթե տետրադրախմայի կրկնօրինակն է, որի դիմերեսն ունի հուշադրամներին բնորոշ ձեւավորում:

Հուշադրամի դիմերեսին Տիգրան Մեծի արծաթե տետրադրախմայի դարձերեսի պատկերն է: Շախից շրջագծով եզրաշրջի մոտ մակագրված է՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ»: Վերեւում եզրաշրջի մոտ նշված է թողարկման տարեթիվը՝ «2003», իսկ ներքեւում երկու տողով անվանական արժեքի մակագրությունն է՝ «1000» եւ «ԴՐԱՄ»: Դաշտի վերեւի աջ մասում Հայաստանի Հանրապետության զինանշանի պատկերն է:

Հուշադրամի դարձերեսը կրկնում է Տիգրան Մեծի արծաթե տետրադրախմայի դիմերեսը՝ արքայի դիմապատկերով: Շախ մասում եզրաշրջի մոտ զետեղված է մետաղի պայմանական մակագրությունը՝ «Au 585»:

Հուշադրամն անկանոն կլոր տեսքի է եւ ունի հարթ դրամաշուրթ:

Հուշադրամը պատրաստել է «Austrian Mint Corporation» ընկերությունը:

Հուշադրամի բնութագիրը.	
Անվանական արժեքը	1000 դրամ
Մետաղը եւ հարգը	ոսկի, 5850 (սուրբ գույնի)
Քաշը	մոտ կես տրոյական ունցիա (15.55-15.85 գ)
Տրամագիծը	մոտ 26 մմ
Դրամաշուրթը	հարթ
Որակը	սովորական
Տպաքանակը	500 հազ

ՀՀ ԿԲ մամուլի ծառայություն

United Nations Development Programme

UNDP

ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակը հայտարարում է 120 գլուխ ոչխարների գնման մրցույթ: Ոչխարները պետք է համապատասխանեն հետեւյալ պահանջներին՝

1. տեղական ցեղերի կիսանրբագեղմ էգ ոչխարներ՝ 2-4 տարեկան,
2. կենդանի քաշը՝ 35-40կգ,
3. տարեկան բրդատվությունը՝ ոչ պակաս 1.5 կգ,
4. լինեն վարակիչ հիվանդությունների նկատմամբ առպահով գոտուց,
5. անցած լինեն բոլոր պլանային-պրոֆիլակտիկ միջոցառումները եւ լինեն կլինիկապես առողջ:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2003թ. դեկտեմբերի 1-ը, ժամը՝ 18:00:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել հետեւյալ հասցեով՝ Կարլ Լիբկնեխտի 14, Գագիկ Շահինյանին, հեռ. 56-60-73

ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակը հայտարարում է 10,000 կգ առվույտի կամ կորնգանի խոտի գնման մրցույթ: Խոտը պետք է հնձված լինի 2003 թ-ին եւ լինի լավ պահպանված վիճակում:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2003թ. դեկտեմբերի 1-ը, ժամը՝ 18:00:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել հետեւյալ հասցեով՝ Կարլ Լիբկնեխտի 14, Գագիկ Շահինյանին, հեռ. 56-60-73

ՄԱԶԾ-ի հայաստանյան գրասենյակը հայտարարում է 1,000 կգ անասնակերի (գարի) գնման մրցույթ: Անասնակերը պետք է հնձված լինի 2003 թ-ին եւ լինի լավ պահպանված վիճակում:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետն է 2003թ. դեկտեմբերի 1-ը, ժամը՝ 18:00:

Մանրամասն տեղեկությունների համար դիմել հետեւյալ հասցեով՝ Կարլ Լիբկնեխտի 14, Գագիկ Շահինյանին, հեռ. 56-60-73

Ի ԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի բաժանորդների

ՋՐՄՈՒՂ-ԿՈՅՈՒՂԻ ԵՎԿ

Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ընկերությունը տեղեկացնում է, որ երկարաձգվել է «Խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման, կեղտաջրերի մաքրման եւ ոռոգման ջրի մատակարարման ծառայությունների դիմաց առաջացած պարտավորությունների գծով վճարման արտոնություններ սահմանելու մասին» ՀՀ օրենքի գործողության ժամկետը: Մասնավորապես.

■ Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի հետ պայմանագիր չկնքած բնակիչ-բաժանորդներին անհրաժեշտ է դիմել ընկերության համապատասխան տարածային մասնաճյուղեր կամ տեղամասեր եւ կնքել ջրամատակարարման եւ նախկին տարիներին կուտակված պարտքը արտոնյալ պայմաններով մարելու պայմանագիր,

■ Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ-ի հետ պայմանագիր կնքած, բայց պայմանագրային պարտավորությունները չկատարած բնակիչ-բաժանորդներին անհրաժեշտ է դիմել ընկերության համապատասխան տարածային մասնաճյուղեր կամ տեղամասեր եւ ճշգրտել պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետը,

■ Չվճարված գումարները բռնագանձելու մասին դատական վճիռների առկայության դեպքում բնակիչ-բաժանորդներին անհրաժեշտ է դիմել ընկերության համապատասխան տարածային մասնաճյուղեր կամ տեղամասեր եւ կազմել պարտքերի չափերի, մարման ժամկետների եւ վճարումների մասին ժամանակացույց:

Երեւանի «Ջրմուղ-կոյուղի» ՓԲԸ

ԿՈՂՊԻՆ ԼՍԻՐԸ՝
ԿՈՂՊԻՆ ՍԼԻՔՈՎ

Ուզու՞մ եք ամենավերջին իրադարձություններին եւ օրվա մամուլի հրապարակումներին ծանոթանալ ամենաառաջինը
Ուզու՞մ եք լսել բազմակողմանի վերլուծություն եւ անաչառ մեկնաբանություն

Հետեւեք
Հայաստանի Հանրային ռադիոյի
«Ռադիոլուր» եւ «Ռադիոպրես»

լրատվական-վերլուծական ծրագրերին ամեն օր՝ ուղիղ եթերում
ժամը **6.00, 8.00, 10.00, 11.00, 12.00, 13.00, 14.00,**
15.00 (հայերեն եւ ռուսերեն տարբերակներով), **17.00, 18.00, 22.00, 23.00**
«Ռադիոպրեսը»՝ օրվա մամուլի տեսությամբ եթերում է ժամը **9.50**-ին եւ **11.45**-ին

18.00-ին
Հիմնական թողարկումը

Օրերաշիվ լրատվություն
Բազմակողմանի վերլուծություն
Անաչառ մեկնաբանություն
Հյուր՝ ուղիղ եթերում
Լրագրողական հետաքննություն
Մամուլի տեսություն **«Ռադիոպրես»**

Մեզ տարբեր ժամերի կարող եք լսել
62, 215, 1282 մետր ալիք, **FM 102** եւ **FM 107.6,**
4,3 մետր ԳԿԱ ռադիոկայաններով, քաղաքային լարային ցանցով,
ինտերնետով. www.armradio.am

Microsoft CERTIFIED Partner
Microsoft CERTIFIED Technical Education Center
VUE

@rminco
Global Telecommunications

VUE տեսային կենտրոնն առաջարկում է հանձնել Microsoft, CIW, Cisco Systems եւ այլ ֆիրմաների տրամադրած քննություններ եւ ստանալ համապատասխան վկայական:
Մանրամասն տեղեկությունների համար դիմել՝ Փ. Բյուզանդի 1/3, 7-րդ հարկ

Ժամը 10.00-17.30
Հեռ.՝ 582-760

«Վիրահայերի միասնություն» ՀԿ հայտարարությունը

Մենք՝ վիրահայերս, որտեղ էլ որ ապրելիս լինենք՝ Հայաստանում թե արտերկրներում, սեւեռուն հայացքով հետեւում էինք Վրաստանում տեղի ունեցող ներքաղաքական զարգացումներին: Բոլորիս մտահոգությունը մեկն էր՝ ուժ չգործադրվի, զարգացող իրադարձությունները խաղաղ լուծում ստանան: Բարեբախտաբար, այդպես էլ եղավ՝ ծայն բազմաց՝ ծայն Աստծո: Այսպիսով, մեր երկրորդ հայրենիքը՝ Վրաստանը, թեւակոխեց լինելիության նոր փուլ:

«Վիրահայերի միասնություն» հասարակական կազմակերպությունը հույս է հայտնում, որ Վրաստանի նոր իշխանությունները գործուն միջոցներ կձեռնարկեն վրաց պետության հիմքերի ամրապնդման, Վրաստանում ժողովրդավարական գործընթացների խորացման, երկրի բարգավաճման համար: Համոզված ենք, որ վիրահայությունն իր գործուն մասնակցությունը կբերի Վրաստանի ապագայի կերտմանը: Այդ հույսով հարյուր հազարավոր վիրահայեր ապրում ու արարում են Վրաստանի տարբեր ռեգիոններում՝ մշտապես պահպանելով պետականամետ, կառուցողական կեցվածք:

Այսօր էլ մենք ձգտում ենք համախմբել ողջ վիրահայության ներուժը, այն ուղղորդել հայ-վրացական պետական, տնտեսական ու մշակութային փոխշահավետ համագործակցությանը:

Այս առումով մենք կոչ ենք անում մեր համերկրացիներին՝ եռանդուն մասնակցություն ունենալ նորանկախ պետականության շինարարությանը, ժողովրդավարության ամրապնդման գործընթացներին՝ համագործակցելով վրաց ժողովրդի կամքն արտահայտող քաղաքական ու հասարակական ուժերի հետ, ստեղծարար աշխատանքով շենացնել վրաց հողը, չենթարկվել ինչ-ինչ սադրանքների:

«Վիրահայերի միասնություն» ՀԿ-ն վստահ է, որ Վրաստանի ներկա իշխանությունները վրաց եւ փոքրամասնություն կազմող ազգերի գոյատեւման ու բարեկամության առավել սերտացման համար չեն խնայի ոչինչ: Դրան է նպատակաուղղված նաեւ մեր կազմակերպության գործունեությունը:

«ՎԻՐԱՀԱՅԵՐԻ ՄԻԱՍՆՈՒԹՅՈՒՆ» ՀԿ ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅՈՒՆ
26.11.2003 թ.

ՀՀ Կենտրոնական բանկը 27.11.2003 թ. ժ. 9:00-ից սահմանում է արտարժույթի հետեւյալ հաշվարկային փոխարժեքները ու գնման եւ վաճառքի հետեւյալ գները

ISO-ի կոդը	Միավոր	Արտարժույթ	Հաշվարկային փոխարժեք	Գնում	Վաճառք
USD	1	ԱՄՆ դոլար	566.42	560.80	572.10
EUR	1	եվրո	669.96	665.90	674.00
RUR	1	ռուս. ռուբլի	19.05	17.90	20.20

For Your Internal News of Armenia Log on to
www.azg.am
In Armenian, Russian, English and Turkish

Գովազդի համար զանգահարել՝ 58-24-83

«Գինդ» տպագրատուն, Երեւան, Բագրատունեաց 70ա Գրանցման թիվ 65. Դասիչ 69150. Տպաքանակը՝ 3000 Ստորագրված է տպագրության՝ 26. 11. 2003 Գինը՝ 100 դրամ